

## Մայքրոսոֆթի Կորպորացիայի գնման պատվերի պայմաններ և դրույթներ («ԳՊ-ի պայմաններ»)

1. **Ընդունումը և իրավական ուժը:** Սույն ԳՊ-ի պայմանները կնքվում են Մայքրոսոֆթ իրավաբանական անձի («Մայքրոսոֆթ») և գործող ԱԴ-ում նշված մատակարարի («Մատակարար») միջև և վերաբերում են հետևյալին.
    - a. «Ամպային ծառայություններ». ծառայությունները, վեբկայքերը (ներառյալ հոսթինգը), լուծումները, պլատֆորմները և ապրանքները, որոնք Մատակարարը հասանելի է դարձնում սույն ԳՊ դրույթների համաձայն կամ դրանց հետ կապված, ներառյալ ծրագրաշարը, բջջային հավելվածները, սարքավորումները, տեխնոլոգիաները և ծառայությունները, որոնք անհրաժեշտ են Մատակարարի կողմից նշվածը տրամադրելու համար:
    - b. «Վերջնական արդյունք». Մատակարարի (կամ Մատակարարի կողմից հաստատված ենթակապալառուի) կողմից մշակված աշխատանքային ողջ արտադրանքը Մայքրոսոֆթի համար, որպես Ապրանքների, ծառայությունների կամ ամպային ծառայությունների մատուցման մաս, ներառյալ՝ մտավոր սեփականությունը՝ («ՄՍ») այս ԳՊ դրույթների հետ կապված: Առաքման ենթակա տարրերը «վարձավճարի դիմաց կատարվող աշխատանքն» է Մայքրոսոֆթի համար, ինչպես սահմանված է հեղինակային իրավունքների գործող օրենքով:
    - c. «Ապրանքներ». ծրագրաշար և/կամ շոշափելի ապրանքներ, որոնք արտոնագրված կամ գնված են Մայքրոսոֆթի կողմից՝ սույն ԳՊ դրույթների ներքո:
    - d. «Ծառայություններ». սույն ԳՊ դրույթների համաձայն Մայքրոսոֆթի կողմից գնված մասնագիտական ծառայություններ, գովազդային, խորհրդատվական ծառայություններ, աջակցություն և սպասարկման ծառայություններ:
    - e. «ԱԴ» նշանակում է հետևյալ անվանակարգերից որևէ մեկը. (1) Մայքրոսոֆթի գնման պատվերներ, (2) երկու կողմերի լիազոր ներկայացուցիչների կողմից ստորագրված աշխատանքի հայտարարությունները կամ պատվերի այլ ձևեր, կամ (3) գրավոր համաձայնագրեր, որոնք ստորագրվել են երկու կողմերի լիազոր ներկայացուցիչների կողմից, հղում կատարելով սույն ԳՊ դրույթներին:
- Սույն ԳՊ դրույթներն ուժի մեջ են մտնում Մատակարարի կողմից աշխատանքի կատարումը սկսելու կամ Մատակարարի կողմից գործող ԱԴ-ն ստորագրելու ամսաթվից, որը ավելի վաղ լինի: Բացառությամբ ստորև 2-րդ բաժնում նշված դեպքերի, սույն ԳՊ դրույթների ընդունումը Մատակարարի կողմից անմիջապես սահմանափակված է սույն դրույթների և պայմանների շրջանակներում առանց հանդիպակաց առաջարկի:
2. **Առնչությունն այլ Համաձայնագրերին:** Սույն ԳՊ դրույթներն ու պայմանները ամբողջական են և պարտավորեցնող Մայքրոսոֆթի և Մատակարարի համար՝ բացառությամբ հետևյալ դեպքերի.
  - a. Եթե կողմերի միջև կնքվում է երկկողմանի ստորագրված համաձայնագիր, այդ թվում նաև Մայքրոսոֆթի-ի Մատակարարի հետ ծառայությունների համաձայնագիրը, որն ուժի մեջ է մտնում այս ԳՊ-ի դրույթների ամսաթվի օրվանից և վերաբերում է այս ԳՊ-ի դրույթների շրջանակներում պատվիրված Ապրանքներին, Ծառայություններին, և Ամպային ծառայություններին, և որ համաձայնագիրն անդրադառնում է սույն ԳՊ-ի դրույթներով կարգավորվող հարաբերություններին, ապա կիրառվում են նման համաձայնագրի դրույթները: Սույն ԳՊ դրույթների և նման համաձայնագրի միջև հակասություն առաջանալու դեպքում, տվյալ հակասության չափով, կիրառվում են տվյալ համաձայնագրի դրույթները: Սույն ԳՊ-ի դրույթների նպատակներով առցանց պայմանները կամ համաձայնագրերը, որոնք Մայքրոսոֆթն ընդունում է Ապրանքներին, Ծառայություններին, և Ամպային ծառայություններին մուտք գործելու համար, ինչպիսիք են տեղադրված հավելվածները, ծրագրային կոդերի նմուշների կիրառմամբ պատրաստված ծրագրաշարը, ծրագրաշարը որպես ծառայություն կամ պլատֆորմ, «փոխադարձաբար կատարված»

համաձայնագիր չէ և որևէ կերպ չի փոխարինում, լրացնում կամ փոփոխում է այս ԳՊ-ի դրույթներում նախատեսված դրույթները:

- b. Այն դեպքում, եթե սույն ԳՊ դրույթների նկատմամբ կարող են կիրառվել մի քանի համաձայնագրեր՝ միանման կամ հակասող դրույթներով, ապա կողմերը համաձայնվում են, որ սույն ԳՊ դրույթների նկատմամբ կկիրառվեն Մայքրոսոֆթի համար ամենանպաստավոր դրույթները, բացառությամբ ոչ ողջամիտ, չափազանցված կամ օրենքով չթույլատրվող դեպքերի:
- c. Բացառությամբ 2-րդ բաժնում նշված դեպքերի և 9-րդ բաժնից դուրս նկարագրված դեպքերի, ինչպես նաև Բաժին 14-ում նկարագրված Դադարեցման դրույթների, լրացուցիչ կամ տարբերվող դրույթները չեն փոփոխի սույն ԳՊ-ի դրույթները, եթե կողմերի միջև փոխադարձ գրավոր ներկայացված փաստաթուղթ չլինի:

**3. Փաթեթավորում, Առաքում և Ապրանքների ու Առաքման ենթակա տարրերի վերադարձ:** Եթե սույն ԳՊ դրույթներում մասնավորապես նշված չէ.

**a. Փաթեթավորում:**

- (1) Գինը՝ հիմնված քաշի վրա, ներառելու է միայն զուտ քաշը:
- (2) Մատակարարը չպետք է գանձումներ կատարի Մայքրոսոֆթից փաթեթավորման ծախսերի կամ առաքմանը նախորդող ծախսերի համար, ինչպիսիք են՝ արկղերի մեջ փաթեթավորումը, վանդակապատումը, բեռնելու ժամանակ հասցված վնասը, փոխադրման կամ պահեստավորման ծախսերը:

**b. Առաքում:**

- (1) Մատակարարի բոլոր բեռնարկերի վրա պետք է նշի առաքմանը և բեռնմանը վերաբերող տեղեկությունները, ԳՊ համար(ներ)ը, առաքման ամսաթիվը, ինչպես նաև բեռը ստացողի և ուղարկողի անունները:
- (2) Յուրաքանչյուր առաքման հետ պետք է ներառվի մանրամասնեցված հաշիվ-ապրանքագիրը և փաթեթավորման ցուցակը, ինչպես նաև այլ փաստաթղթեր, որոնք պահանջվում են ներքին և միջազգային տարանցման, մաքսագերծման կամ Ապրանքների ու Առաքման ենթակա տարրերի նույնացման համար:
- (3) Մայքրոսոֆթը վճարելու է միայն փաստացի ստացված քանակության համար, որը չպետք է գերազանցի պատվիրված առավելագույն քանակը:
- (4) Մայքրոսոֆթը կամ իր գործակալը կպահեն ավել բեռնված քանակությունը Մատակարարի հաշվին և նրա պատասխանատվության ներքո և ողջամիտ ժամկետներում՝ մինչև Մատակարարից առաքման ցուցումներ ստանալը:
- (5) Մայքրոսոֆթը չի կրի բեռնման կամ առաքման ծախսերը:
- (6) Կողմերի միջև այլ պայմանավորվածության բացակայության դեպքում, Ապրանքները և Առաքման ենթակա տարրերը կառաքվեն գնման պատվերի ամսաթվից հետո 10<sup>-րդ</sup> օրը.
  - (i) FOB դեպի Մայքրոսոֆթի նշանակված առաքման վայր, եթե Ապրանքները և Առաքման ենթակա տարրերի ծագման վայրը և Մայքրոսոֆթի կողմից նշանակված առաքման վայրը գտնվում են միևնույն իրավասության ներքո, կամ
  - (ii) DDP դեպի (Incoterms 2010) Մայքրոսոֆթի նշանակված առաքման վայր՝ Ապրանքների և Առաքման ենթակա տարրերի միջաահմանային առաքումների համար՝ դեպի Մայքրոսոֆթի կողմից նշանակման առաքման վայր:

- (7) Մատակարարը կրելու է Ապրանքների կամ Առաքման ենթակա տարրերի կորստի, վնասվածքների կամ խաթարումների ողջ պատասխանատվությունը՝ մինչև Մայքրոսոֆթը չընդունի դրանք նշանակված առաքման վայրում: Մայքրոսոֆթը պատասխանատվություն է կրում այն կորստի համար, որը, ընդունելուց առաջ, տեղի կունենա իր աշխատակիցների անփութության հետևանքով:

- c. **Վերադարձ:** Մատակարարը կրելու է ավել առաքված քանակության կամ մերժված տարրերի վերադարձ-առաքման ծախսերը:

**4. Հաշիվ-ապրանքագրեր:**

- a. Մատակարարը Մայքրոսոֆթ կորպորացիային ՄՍ հաշիվ-ապրանքագիր կուղարկի՝ կիրառելով [SupplierWeb \(microsoft.com\)](https://supplierweb.microsoft.com)-ը: Մայքրոսոֆթի հաշիվ-ապրանքագրերի ներկայացման գործընթացը էլեկտրոնային հաշիվ-ապրանքագրերի ներկայացման գործընթաց է: ՄՍ-ի հաշիվ-ապրանքագիրը (<https://einvoice.microsoft.com>) վեբի վրա հիմնված հավելված է՝ տրամադրված Մայքրոսոֆթի կողմից իր վճարառուներին, ինչը թույլ է տալիս վճարառուներին էլեկտրոնային հաշիվ-ապրանքագրերը ներկայացնել անմիջապես Մայքրոսոֆթին: MS-ի հաշիվ-ապրանքագրի գործիքը թույլ է տալիս ներկայացնել էլեկտրոնային հաշիվ-ապրանքագրերը անհատական կարգով կամ մի քանի հաշիվ-ապրանքագրի դեպքում՝ զանգվածային վերբեռնման միջոցով: Վճարառուն պետք է կապվի Մայքրոսոֆթի Վճարվող հաշիվների աջակցման կենտրոնի հետ <https://www.microsoft.com/en-us/procurement/contracting-apsupport.aspx> հասցեով և վավեր ապացույցներ տրամադրի, եթե չկարողանա ներկայացնել հաշիվ-ապրանքագրերը այս համակարգի միջոցով: Բացառության կարգով Մայքրոսոֆթը կտրամադրի հաշիվ-ապրանքագրի ներկայացման այլնորմալային ընթացակարգ: Հաշիվ-ապրանքագրերը պետք է ներառեն հետևյալ տեղեկատվությունը. ԳՊ-ի համարը, տարրի համարը, տարրի նկարագրությունը, քանակները, միավորների արժեքները, հանրագումարները, փաթեթավորման պիտակի համարը, առաքման տվյալները, նպատակակետ հանդիսացող քաղաքը և երկիրը, ինչպես նաև ցանկացած այլ խելամիտ տեղեկություններ, որոնք կպահանջվեն Մայքրոսոֆթի կողմից: Մատակարարը չպետք է Մայքրոսոֆթից պահանջի վճարել իր կողմից ներկայացված հաշիվ-ապրանքագրերում առկա սխալները հայտնաբերելու, ուղղելու և դրանց վերաբերյալ զեկուցելու համար:
- b. Մայքրոսոֆթը կարող է վիճարկել ցանկացած հաշիվ-ապրանքագիր՝ բանավոր կամ գրավոր ծանուցում ներկայացնելու կամ մասնակի վճարում կատարելու միջոցով: Մայքրոսոֆթը կձեռնարկի առևտրային տեսանկյունից բոլոր ողջամիտ միջոցները՝ համապատասխան հաշիվ-ապրանքագիրը ստանալուց հետո 630 օրվա ընթացքում վիճարկվող գումարի մասին Մատակարարին գրավոր տեղեկացնելու համար: Ծանուցման չներկայացումը կամ հաշիվ-ապրանքագրի գումարի վճարումը չեն կարող դիտարկվել որպես հրաժարում որևէ պահանջից կամ իրավունքից:

**5. Վճարման պայմաններ, Չեղչեր կանխիկ վճարելու դեպքում, Փոխհատուցում, Ծախսեր:**

- a. Մայքրոսոֆթի կողմից Ապրանքների, Ծառայությունների կամ Ամպային ծառայությունների ընդունումից և ճիշտ ու չվիճարկվող հաշիվ-ապրանքագիրը ստանալուց հետո («Ստեղծման ամսաթիվ»), Մայքրոսոֆթը վճարումը կկատարի Ստեղծման ամսաթվից հետո 30 օրվա ընթացքում:
- b. Մայքրոսոֆթը պարտավոր չի լինի վճարում կատարել Մատակարարից ստացած որևէ հաշիվ-ապրանքագրի դիմաց, որը ստացվել է Ապրանքները, Ծառայությունները կամ Ամպային ծառայությունները Մայքրոսոֆթի կողմից ընդունելու ամսաթվից ավելի քան 120 օր անց:
- c. Հաշիվ-ապրանքագրի դիմաց վճարում կատարելը չի կարող դիտարկվել որպես Ապրանքների ընդունում՝ սույն ԳՊ դրույթների ներքո և այն ենթակա է ճշգրտման՝ սխալների, թերությունների առկայության կամ Մատակարարի կողմից սույն ԳՊ դրույթների պահանջները չկատարելու դեպքում:

- d. Մայքրոսոֆթը կարող է հաշվանցել Մայքրոսոֆթին վճարվելիք գումարները՝ Մատակարարին կամ Մատակարարի դուստր ձեռնարկություններին Մայքրոսոֆթի կողմից վճարվելիք գումարի դիմաց: Հաշվանցումը կատարելուց հետո ողջամիտ ժամկետներում Մայքրոսոֆթը Մատակարարին կտրամադրի դրա վերաբերյալ ծանուցում:
- e. Կողմերի միջև այլ պայմանավորվածություն չլինելու դեպքում, Ապրանքների, Ծառայությունների կամ Ամպային ծառայությունների տրամադրման, ինչպես նաև սույն ԳՊ դրույթների ներքո կատարման հետ կապված բոլոր ծախսերի համար պատասխանատվություն է կրում Մատակարարը:

## 6. Հարկեր:

- a. Մայքրոսոֆթի կողմից Մատակարարին վճարվելիք գումարները չեն ներառում հարկերը՝ բացի ստորև նշված դեպքերից: Մայքրոսոֆթը որևէ հարկային պարտավորություն չի կրում, Մատակարարն է կրում վճարման պարտավորություն՝ զուտ եկամտահարկի կամ համախառն եկամտահարկի ստացականները, ֆրանշիզայի հարկերը և գույքահարկը: Մայքրոսոֆթը Մատակարարին կվճարի սույն ԳՊ դրույթների շրջանակներում հասանելի վաճառքի, օգտագործման և ավելացված արժեքի հարկերը, որոնք օրենքը Մատակարարից պահանջում է հավաքագրել Մայքրոսոֆթից:
- b. Մայքրոսոֆթը չի ներգրավվի Ապրանքների, Ծառայությունների կամ Ամպային ծառայությունների ներմուծման հետ, իսկ ներմուծման հարկերը մատակարարի պատասխանատվությունն են, եթե ԱՊ-ով այլ բան նախատեսված չէ:
- c. Եթե Մայքրոսոֆթը Մատակարարին տրամադրի հարկերից ազատման վավեր վկայական, ապա Մատակարարը չպետք է հավաքագրի այդ վկայականով ծածկվող հարկերը:
- d. Եթե օրենքը Մայքրոսոֆթից պահանջում է Մատակարարին վճարվող գումարներից պահել հարկերը, ապա Մայքրոսոֆթը կարող է պահել այդ հարկերը և դրանք փոխանցել համապատասխան հարկային մարմիններին: Այդպիսի հարկերի համար Մայքրոսոֆթը Մատակարարին կտրամադրի պաշտոնական անդորրագիր: Մայքրոսոֆթը կգործադրի հնարավոր ջանքերը՝ օրենքի կողմից թույլատրելի սահմաններում հարկերը հնարավորինս նվազեցնելու համար:

## 7. Չննում և ընդունում:

- a. Ըստ պահանջի, Մատակարարը Մայքրոսոֆթին կտրամադրի Մատակարարի ձեռնարկատիրական գործունեության շարունակականության ծրագրի ակնարկ, անհապաղ և բարեխղճորեն կտրամադրի գրավոր պատասխաններ այդ ծրագրի հետ կապված Մայքրոսոֆթի հարցումներին, որպեսզի Մայքրոսոֆթը հնարավորություն ունենա վերանայել ծրագրի համարժեքությունը:
- b. Բոլոր Ապրանքները և Ծառայությունները ենթակա են լինելու Մայքրոսոֆթի կողմից ստուգման և փորձարկման, ցանկացած վայրում և ցանկացած պահի, ներառյալ արտադրության ժամանակամիջոցը, և մինչև վերջնական ընդունումը: Եթե Մայքրոսոֆթը ստուգումը կամ փորձարկումը կատարի Մատակարարի տարածքում, ապա Մատակարարը պետք է տրամադրի բոլոր հնարավոր միջոցները և օժանդակությունը՝ Մայքրոսոֆթի ստուգող անձնակազմի անվտանգությունը և հարմարավետությունը ապահովելու համար՝ չպահանջելով լրացուցիչ վճարներ: Նախքան վերջնական ստուգումը և ընդունումը իրականացված կամ չիրականացված ստուգումները կամ փորձարկումները Մատակարարին չեն ազատում խոտանի առկայության կամ սույն ԳՊ դրույթների պահանջների չկատարման համար պատասխանատվությունից:
- c. Եթե սույն ԳՊ դրույթների շրջանակներում տրամադրված որևէ տարր ունի նյութի կամ անորակ աշխատանքի խոտան, կամ որևէ այլ առումով չի համապատասխանում պահանջներին, ապա Մայքրոսոֆթը իրավունք ունի չընդունել այն, պահանջել շտկել անհամապատասխանությունը սահմանված ժամանակամիջոցում, ընդունել այն գնի փոփոխմամբ կամ վերադարձնել Մատակարարին՝ ամբողջական գումարի վերադարձմամբ:

Մայքրոսոֆթի կողմից ծանուցումը Մատակարարին տրամադրվելուց հետո Մատակարարը պետք է անմիջապես փոխարինի կամ ուղղի ցանկացած մերժված կամ շտկման ենթակա տարր՝ իր հաշվին: Եթե Մայքրոսոֆթի պահանջից հետո Մատակարարն անմիջապես չփոխարինի կամ չշտկի խոտան ունեցող տարրը՝ առաքման ժամանակացույցի համաձայն, ապա Մայքրոսոֆթը կարող է, իր հայեցողությամբ. (1) փոխարինել կամ շտկել այդ տարրը և Մատակարարից գանձել այդ նպատակով ծախսված գումարը, (2) առանց լրացուցիչ ծանուցման դադարեցնել սույն ԳՊ դրույթների գործողությունը կամ ի սկզբանե գործող ԱԴ-ն, և մերժված Ապրանքները և Առաքման ենթակա տարրերը վերադարձնել Մատակարարին իր իսկ հաշվին, իսկ Մատակարարն այդ դեպքում պետք է անմիջապես փոխհատուցի տարրը վերադարձնելու համար Մայքրոսոֆթի կողմից վճարված գումարները կամ (3) պահանջի գնի համաչափ նվազեցում:

- d. Նախկինում կատարված զննումներից կամ վճարումներից անկախ, բոլոր Ապրանքներն ու Ծառայությունները պետք է ենթակա լինեն վերջնական ստուգման և ընդունման՝ Microsoft-ի կողմից նշանակված վայրում, առաքումից կամ շահագործումից հետո ողջամիտ ժամկետներում: Ստուգման բոլոր աշխատանքների գրառումները պետք է լինեն ամբողջական և հասանելի Մայքրոսոֆթի համար՝ սույն ԳՊ դրույթների գործողության ողջ ընթացքում և դրանից հետո այնքան ժամանակ, որքան կսահմանի Մայքրոսոֆթը:

## 8. Լրացուցիչ ամպային ծառայությունների պահանջներ:

- a. **Ծառայությունների մակարդակները:** Մատակարարը կնախատեսի Ամպային ծառայությունների արդիացումներ կամ սպասարկում՝ Սպասարկման պատուհանի ցանկացած ընթացքում, ինչպես սահմանված է կիրառելի ԱԴ-ով: Մատակարարը կտրամադրի Ամպային ծառայություններ՝ [https://aka.ms/CS\\_SLA-nl](https://aka.ms/CS_SLA-nl) (կամ հաջորդող ցանկացած հղումով), նշված ծառայության մակարդակներին և դրույթներին համապատասխան, որոնք սույն փաստաթղթվորման մաս են կազմում (օր.՝ մասնագրերը), ներառված են այս ԳՊ դրույթներում և դրանց մասն են կազմում:
- b. **Բիզնես-շարունակականություն:** Մատակարարը պատասխանատու կլինի ձեռնարկության ողջ տարածքում բիզնես շարունակականության արդյունավետ ծրագրի (ներառյալ աղետների վերականգնման և ճգնաժամային կառավարման ընթացակարգերը) ստեղծման, իրականացման, փորձարկման և պահպանման համար՝ Մայքրոսոֆթին Ամպային ծառայությունների շարունակական հասանելիություն և աջակցություն ապահովելու համար: Մատակարարը պարտավորվում է մշտապես. (1) պահուստավորել, արխիվացնել և պահպանել կրկնօրինակ կամ ավելորդ համակարգեր, որոնք. (i) գտնվում են անվտանգ ֆիզիկական վայրում (բացի հիմնական համակարգ(եր)ի գտնվելու վայրից, որն օգտագործվում է Ամպային ծառայություններ մատուցելու համար), (ii) թարմացվում և փորձարկվում են առնվազն տարեկան կտրվածքով և (iii) կարող է օրական կտրվածքով ամբողջությամբ վերականգնել Ամպային ծառայությունները և Մայքրոսոֆթի բոլոր նյութերը. և (2) ստեղծել և հետևել ընթացակարգերի և հաճախականությունների ընդմիջումներին պահուստային տվյալների և համակարգերի մատակարարի գտնվելու վայրի փոխանցման համար: Ըստ պահանջի, Մատակարարը Մայքրոսոֆթին կտրամադրի Մատակարարի ձեռնարկատիրական գործունեության շարունակականության ծրագրի ակնարկ, անհապաղ և բարեխղճորեն կտրամադրի գրավոր պատասխաններ այդ ծրագրի հետ կապված Մայքրոսոֆթի հարցումներին, որպեսզի Մայքրոսոֆթը հնարավորություն ունենա վերանայել ծրագրի համարժեքությունը:
- c. **Անցում:** Եթե գործող ԱԴ-ը դադարեցվում կամ ավարտվում է, կամ եթե Մայքրոսոֆթը գրավոր դիմում է, Մատակարարը կտրամադրի հետևյալը. (1) պահուստային մեղիա Մայքրոսոֆթին՝ (ինչպես ողջամտորեն պահանջված է Մայքրոսոֆթի կողմից) Մայքրոսոֆթի բոլոր նյութերը ներառյալ (եթե Ամպային ծառայությունների կողմից դա չի տրամադրվում որպես ինքնասպասարկման գործառույթ Մայքրոսոֆթին), և (2) Մայքրոսոֆթի կողմից ողջամտորեն պահանջվող ողջ աջակցությունն իրենից ներկայացնում է (Մայքրոսոֆթի հաշվին) Ամպային ծառայություններից ժամանակին և սահուն անցում:

9. **Փոփոխություններ:** Մայքրոսոֆթը կարող է դադարեցնել Մատակարարի կողմից իր պարտավորությունների իրականացումը, ավելացնել կամ պակասեցնել պատվիրված քանակները և փոփոխություններ կատարել՝ ելնելով Մայքրոսոֆթի ողջամիտ գործնական պահանջներից (յուրաքանչյուրը՝ «Պատվերի փոփոխում»)՝ գրավոր ծանուցելով Մատակարարին (այդ թվում՝ նաև էլ. փոստով) և չծանուցելով նրա երաշխավորողներին, ենթակապալառուներին կամ ներկայացուցիչներին: Եթե կողմերի միջև այլ փոխադարձ պայմանավորվածություն չկա, ապա Պատվերի փոփոխումը չի ազդի մինչև Պատվերի փոփոխման ամսաթիվը ժամանակին և ամբողջությամբ առաքված Ապրանքների ու Ծառայությունների վրա: Եթե որևէ փոփոխության արդյունքում արժեքը բարձրանում կամ իջնում է, կամ փոփոխվում են Մատակարարի կողմից պարտականությունների իրականացման ժամկետները, ապա գների կամ առաքման ժամանակացույցի կամ այդ երկուսի նկատմամբ պետք է կիրառվեն համապատասխան կարգավորումներ՝ Մայքրոսոֆթի նախնական գրավոր համաձայնության դեպքում:
10. **Գործիքներ և սարքավորում:** Մատակարարի կողմից Ապրանքները և Ծառայությունները տրամադրվում են պատակով ձեռքբերված բոլոր գործիքները և սարքավորումները, որոնք տրամադրվել են Մայքրոսոֆթին, վճարվել և գնվել նրա կողմից, ներառյալ մասնագրերը, գծագրերը, գործիքները, դրոշմները, կադապարները, սեղմակները, նմուշները, էլեկտրոնային, դակիչները, նկարագրողումները, էկրանները, ժապավենները, ձևանմուշները, փորձարկման հատուկ սարքերը, չափիչ սարքերը, պարունակությունը, տվյալները և ծրագրաշարը, կման կամ կդառնան Մայքրոսոֆթի սեփականությունը, կհամարվեն գաղտնի տեղեկություններ և կմատակարարվեն բարվոք վիճակում՝ հաշվի առնելով նորմալ մաշվածությունը, կառաքվեն 3-րդ բաժնում նշված Մայքրոսոֆթի առաքման նպատակակետ՝ անմիջապես Մայքրոսոֆթի պահանջի դեպքում և առանց Մայքրոսոֆթի կողմից կատարվող որևէ ծախսերի: Մատակարարը երաշխավորում է, որ, առանց Մայքրոսոֆթի նախնական գրավոր համաձայնության, տարր(եր)ը և տեղեկությունները չեն օգտագործվի ցանկացած աշխատանքների կատարման կամ ցանկացած նյութերի կամ մասերի արտադրության համար, եթե դրանք Մայքրոսոֆթի համար չեն: Մատակարարը պետք է հաստատի Մայքրոսոֆթի բոլոր երրորդ կողմի ծրագրերը, որոնք օգտագործվում են Ծառայությունների հետ համատեղ:
11. **Հաշվետվություններ:** Մայքրոսոֆթի խնդրանքով Մատակարարը անհապաղ Մայքրոսոֆթին կտրամադրի նյութերի Ծրագրային Օրագիր՝ («SBOM»)(Ծրագրային ապահովման նյութերի հաշիվ) սույն ԳՊ պայմաններով նախատեսված բոլոր ծրագրերի համար: Յուրաքանչյուր SBOM (Ծրագրային ապահովման նյութերի հաշիվ) պետք է համապատասխանի ԱՄՆ Առևտրի նախարարության կողմից կամ օրենքով այլ կերպ սահմանված նվազագույն պահանջներին:
12. **Կողմերի համապատասխան ՄՍ սեփականությունը և դրա օգտագործումը:**
- a. Յուրաքանչյուր կողմ կպահպանի սեփականության բոլոր իրավունքները նախկինում գոյություն ունեցող ՄՍ-ի նկատմամբ, ինչպես նաև ցանկացած ՄՍ-ի նկատմամբ, որը մշակվել է ինքնուրույն և առնչություն չունի սույն ԳՊ դրույթների շրջանակներում մատուցվող Ապրանքների, Ծառայությունների և Ամպային ծառայությունների հետ, ներառյալ դրանով նախատեսված նման կողմի ՄՍ-ի իրավունքները:
- b. Մայքրոսոֆթը որպես սեփականություն կպահպանի Առաքման ենթակա բոլոր տարրերը, ներառյալ ՄՍ-ի բոլոր իրավունքները, բոլոր մեդիաները ցանկացած ձևաչափով, սարքավորումներով և այլ շոշափելի նյութերով, որոնք ստեղծվել են Մատակարարի կողմից Ծառայությունները մատուցելիս: Մատակարարի ցանկացած աշխատանք, որը ներառում է գրավոր կամ հարմարեցված արտադրանք կամ դրան առնչվող կամ դրանում օգտագործվող հաշվետվություն, համարվում է ՄՍ:
- c. Եթե Առաքման ենթակա որևէ տարր չի համապատասխանում վարձավճարի դիմաց կատարվող աշխատանքի որակին, Մատակարարը Առաքման ենթակա տարրերից ստացվող և դրանց առնչվող բոլոր իրավունքները, բոլոր նյութական իրավունքները, այդ թվում՝ նաև ՄՍ իրավունքները փոխանցելու է Մայքրոսոֆթին: Մատակարարը հրաժարվում է Առաքման ենթակա տարրերի նկատմամբ բոլոր բարոյական իրավունքներից:

- d. Եթե Մատակարարը Ապրանքների կամ Ծառայության մեջ օգտագործում է Մատակարարին կամ Երրորդ կողմին պատկանող որևէ ՄՍ, ապա Մատակարարը կմնա իր իսկ ՄՍ իրավունքների սեփականատերը: Մատակարարը ընթացիկ և ապագա ՄՍ-ի ներքո, Մայքրոսոֆթին կշնորհի ամենուրեք կիրառվող, ոչ-բացառիկ, մշտական, հետ չկանչվող, հատկացումներ չպահանջող և ամբողջությամբ վճարված իրավունք և լիցենզիա՝ սույն 12-րդ բաժնում նկարագրված Մայքրոսոֆթի սեփականատիրության շահերին համապատասխանող Մատակարարի և Երրորդ կողմի մտավոր սեփականության նկատմամբ:
- e. Մատակարարը թույլատրում է Մայքրոսոֆթին և նրա դուստր ընկերություններին (ներառյալ նրանց աշխատողներին, կապալառուներին, խորհրդատուներին, արտապատվիրված աշխատողներին, ինչպես նաև պրակտիկանտներին, որոնք Մայքրոսոֆթին կամ նրա որևէ փոխկապակցված ընկերությանը մատուցել են ծառայություններ) ամենուրեք կիրառվող, հետ չկանչվող, անհատույց, ոչ-բացառիկ, մշտական և ամբողջությամբ վճարված, հատկացումներ չպահանջող լիցենզիա՝ ծրագրաշար կամ այլ ՄՍ պարունակող ցանկացած Ապրանքի համար, որոնք ենթակա չեն փոխադարձաբար ստորագրված առանձին լիցենզիայի, (ներառյալ տեղադրված ծրագրերը): Արտոնագիրը թույլ է տալիս Մայքրոսոֆթին օգտագործել Ապրանքների առնչվող նման ծրագրաշարերը և մտավոր սեփականությունը: Մայքրոսոֆթը կարող է փոխանցել այդ արտոնագիրը Մայքրոսոֆթի որևէ դուստր կազմակերպության, Մայքրոսոֆթի իրավահաջորդ սեփականատիրոջ՝ վաճառքի կամ վարձակալության միջոցով:
- f. Մատակարարը թույլատրում է Մայքրոսոֆթին և նրա դուստր ընկերություններին (ներառյալ նրանց աշխատողներին, կապալառուներին, խորհրդատուներին, արտապատվիրված աշխատողներին, պրակտիկանտներին, որոնք Մայքրոսոֆթին կամ նրա որևէ փոխկապակցված ընկերությանը մատուցել են ծառայություններ), ինչպես նաև վերջնական օգտատերերին (առկայության դեպքում) Ամպային ծառայությունների կատարման համար անհրաժեշտ չափով սահմանափակված՝ ամենուրեք կիրառվող, ոչ-բացառիկ, անսահմանափակ, վճարվող և հատկացումներ չպահանջող իրավունք՝ Մայքրոսոֆթի բիզնես նպատակներից յուրաքանչյուրի համար Ամպային ծառայություններին գործողության ժամկետի ընթացքում մատչելու և օգտագործելու նպատակով: Ամպային ծառայությունների մատչումն անսահմանափակ է, եթե ԱԴ-ով այլ բան նախատեսված չէ:
- g. **Երաշխիքների և վնասների փոխհատուցման պարտավորությունների փոխանցում:** Մատակարարը փոխանցում է Microsoft-ին Ապրանքների հետ կապված երրորդ կողմի և լիցենզատուների բոլոր երաշխիքները և վնասների փոխհատուցման պարտավորությունները:
- h. Ապրանքներն ընդունելուն պես՝ դրանց սեփականատիրության իրավունքը (բացի արտոնագրված ծրագրաշարից) փոխանցվելու է Մատակարարից Microsoft-ին՝ վերջնական ընդունման համար:
- i. **Մայքրոսոֆթի ՄՍ:**
- (1) Մատակարարը կարող է օգտագործել «Մայքրոսոֆթ Նյութեր», այսինքն՝ ցանկացած Նյութական կամ ոչ Նյութական Նյութեր, որոնք Մատակարարին են տրամադրվել են Մայքրոսոֆթի, նրա դուստր ձեռնարկություններից ցանկացածի կամ իրենց համապատասխան վերջնական օգտատերերի կողմից՝ Ծառայություններ կամ Ամպային ծառայություններ մատուցելու նպատակով, կամ ձեռք են բերվել կամ հավաքագրվել Մատակարարի կողմից Ծառայությունների կամ Ամպային ծառայությունների առնչությամբ (օր.՝ օգտագործման վերաբերյալ տվյալներ) (ներառյալ սարքավորումները, ծրագրաշարերը, սկզբնական կոդը, փաստաթղթերը, մեթոդաբանությունը, գիտելիքները, պրոցեսները, տեխնիկաները, գաղափարները, հասկացությունները, տեխնոլոգիաները,

հաշվետվությունները և տվյալները): Մայքրոսոֆթի նյութերը ներառում են վերը նշված նյութերի ձևափոխումները և դրանց օգնությամբ ստացվող արտադրյալ աշխատանքները, ապրանքանշանները և որպես ծառայությունների մատուցման մի մաս Մատակարարի տվյալների շտեմարանում մուտքագրված տվյալները: Մայքրոսոֆթի նյութերը չեն ներառում Մայքրոսոֆթի արտադրանք, որը ձեռք է բերվել Մատակարարի կողմից սույն ԳՊ դրույթներից դուրս և չեն առնչվում նրա դրույթներին:

- (2) Մայքրոսոֆթն իր նյութերի ՄՍ շրջանակներում Մատակարարին տրամադրում է ոչ բացառիկ, ենթալիցենզավորման ոչ ենթակա (բացառությամբ Մայքրոսոֆթի կողմից սույն ԳՊ դրույթների համաձայն հաստատված ենթակապալառուների), հետ կանչվող արտոնագիր (i) սույն ԳՊ դրույթների շրջանակներում ծառայությունների մատուցման համար միայն իրեն տրամադրված Մայքրոսոֆթի նյութերը պատճենելու, օգտագործելու և տարածելու համար, (ii) ինչպես նաև Մայքրոսոֆթի նյութերը միայն սույն ԳՊ դրույթների շրջանակներում Ամպային ծառայություններ մատուցելու նպատակով: Մատակարարը չի վաճառի, համօգտագործի, արտոնագրի և այլ կերպ չի առևտրայնացնի Մայքրոսոֆթի որևէ նյութ:
- (3) Մայքրոսոֆթը պահպանում է Մայքրոսոֆթ նյութերի և դրանց առնչվող ՄՍ-ի նկատմամբ մյուս բոլոր այլ իրավունքները: Մատակարարն իրավունք չունի ենթալիցենզավորելու Մայքրոսոֆթի նյութերը, բացառությամբ հաստատված ենթակապալառուների ենթալիցենզավորումը, ինչը պահանջվում է Ապրանքներ, Ծառայություններ և Ամպային ծառայություններ տրամադրելու նպատակով: Եթե Մայքրոսոֆթի նյութերը մատուցվում են առանձին լիցենզիայով, ապա կիրառելի կլինեն այդ լիցենզիայի պայմանները, իսկ սույն ԳՊ դրույթների հետ կապված հակասությունների դեպքում վերահսկողությունը կարգավորելիս կկիրառվեն այդ պայմանները:
- (4) Մատակարարը պետք է ձեռնարկի ողջամիտ նախագգուշական միջոցներ և ապահովագրի Մայքրոսոֆթի նյութերը կորստից կամ վնասից, հափշտակումից կամ անհետացումից:
- (5) Մայքրոսոֆթը կարող է ցանկացած պահի հետ կանչել Մայքրոսոֆթի նյութերի համար տրամադրված արտոնագիրը՝ ցանկացած ողջամիտ գործնական պատճառով: Արտոնագրի գործողությունը վաղաժամ կավարտվի ինքնաբերաբար հետևյալ ԳՊ դրույթների կամ գործող ԱԴ-ի ժամկետի ավարտի դեպքում: Մայքրոսոֆթի պահանջով կամ Մատակարարի արտոնագրի դադարեցման դեպքում Մատակարարը պետք է անմիջապես հետ վերադարձնի Մայքրոսոֆթի բոլոր նյութերը:
- (6) Մատակարարի կողմից Մայքրոսոֆթի նյութերը օգտագործելու վերաբերյալ.
  - (i) Մատակարարը չպետք է ձևափոխի, հետադարձ նախագծում իրականացնի, ապակազմարկի կամ ապամոնտաժի Մայքրոսոֆթի նյութերը, բացառությամբ, եթե դա թույլատրել է Մայքրոսոֆթը,
  - (ii) Մատակարարը պետք է իրենց տեղում թողնի և չփոփոխի Մայքրոսոֆթի նյութերում պարունակվող սեփականության մասին ծանուցումները և արտոնագրերը;
  - (iii) Մայքրոսոֆթը պարտավորված չէ Մայքրոսոֆթի նյութերի համար տրամադրել տեխնիկական աջակցություն, տեխնիկական սպասարկում և արդիացումներ:
  - (iv) Մայքրոսոֆթի բոլոր նյութերը տրամադրվում են «ինչպես որ կա» վիճակում՝ առանց որևէ տեսակի երաշխիքների, և



- (v) Մատակարարն իր վրա է վերցնում Մատակարարի (կամ ենթակապալառուի) խնամքի, պահպանության կամ հսկողության տակ գտնվող Microsoft-ի նյութերի կորստի, վնասի, չլիազորված մուտքի կամ օգտագործման, հափշտակման կամ անհետացման հետ կապված ռիսկերը:

**13. Ներկայացումներ և երաշխիքներ:** Մատակարարը ներկայացնում և երաշխավորում է, որ.

- a. Այն լիակատար իրավունքներ և իրավասություն իրավունք ունի սույն ԳՊ դրույթների համաձայն մուտք գործել, իրականացնել, կատարել և իրավունքներ տրամադրել, և դրա կատարումը չի խախտի իր և ցանկացած երրորդ կողմի միջև որևէ համաձայնագիր կամ պարտավորություն,
- b. Ծառայությունները կմատուցվեն մասնագիտորեն, կհամապատասխանեն արդյունաբերական ստանդարտին կամ կլինեն դրանից բարձր,
- c. Ապրանքները, ծառայությունները, Ամպային ծառայությունները և առաքվող ապրանքները պետք է համապատասխանեն սույն ԳՊ դրույթների ստանդարտներին և մասնագրերին և հարմար լինեն նպատակային օգտագործման համար,
- d. Մատակարարը Մայքրոսոֆթին կտրամադրի բոլոր Ապրանքները և Ծառայությունները և առաքման ենթակա տարրերը, որոնք զերծ կլինեն (1) նախագծի, անորակ աշխատանքի և նյութերի խոտանից, (2) հատկացումներ վճարելու պարտավորությունից և (3) մեխանիկի ցանկացած գրավադրումներից կամ օրենքով սահմանված որևէ այլ գրավ կամ անվտանգության շահ կամ բեռ,
- e. Սույն ԳՊ-ի դրույթների շրջանակներում Մայքրոսոֆթին տրամադրված Ապրանքներ, Ծառայություններ, Ամպային Ծառայություններ, Առաքման ենթակա տարրեր, ինչպես նաև ցանկացած Մատակարարի կամ երրորդ անձանց կողմից տրամադրված ՄՍ.
- (1) ամբողջովին կամ մասնակիորեն չեն կառավարվում Բացառված արտոնագրով: «Բացառված արտոնագիր» նշանակում է ցանկացած ծրագրաշարի արտոնագիր, որը, որպես օգտագործման պայման, պահանջում է ձևափոխում և/կամ տարածում, որպեսզի ծրագրաշարը կամ նրա հետ համատեղված և/կամ տարածվող այլ ծրագրաշարը (i) տարածվի բաց կոդի տեսքով, (ii) ունենա արտադրյալ աշխատանքներ կատարելու արտոնագիր կամ (iii) լինի անվճար կերպով վերաբաշխելի, և
- (2) ենթակա չլինի արտոնագրման պայմաններին, որոնք պահանջում են, որպեսզի (i) Մայքրոսոֆթի արտադրանքը, ծառայությունները կամ փաստաթղթերը, կամ սույնով Մայքրոսոֆթին արտոնագրված Մատակարարի կամ երրորդ կողմի ՄՍ-ը կամ այդպիսի արտադրանքը, ծառայությունները, ամպային ծառայությունները, առաքման ենթակա տարրերը համատեղող կամ դրանցից դուրս բերվող փաստաթղթերը կամ Մատակարարի կամ երրորդ կողմի IP-ին կամ (ii) Մայքրոսոֆթի նյութերը կամ Մայքրոսոֆթի IP-ն արտոնագրվեն կամ համօգտագործվեն երրորդ կողմի հետ;
- e. Սույն ԳՊ-ի պայմանների շրջանակներում Մայքրոսոֆթին տրամադրված Ապրանքները, Ծառայությունները, Ամպային Ծառայությունները, Առաքման ենթակա տարրերն ու Մատակարարի կամ երրորդ կողմի IP-ին չպետք է.
- (1) խախտեն որևէ երրորդ կողմին պատկանող արտոնագիր, հեղինակային իրավունք, ապրանքային նշան, առևտրային գաղտնիք կամ այլ սեփականության իրավունք՝ Մատակարարի տեղեկացվածության սահմաններում, կամ
- (2) պարունակեն վիրուսներ կամ այլ վնասակար ծրագրային կոդ, որոնք կարող են վարակել կամ վնաս հասցնել ապրանքներին, առաքման ենթակա տարրերին,

արտադրանքին, ծառայությանը կամ որևէ այլ ծրագրաշարին, Մայքրոսոֆթի ցանցին կամ համակարգերին,

- f.** Մատակարարը կհամապատասխանի բոլոր կիրառելի օրենքներին, կանոններին և կանոնակարգերին, ներառյալ տվյալների պաշտպանության մասին (ինչպես սահմանված է Հավելված Ա-ով) և Հակակոռուպցիոն օրենքներին (այն է՝ բոլոր կիրառելի օրենքները՝ կեղծիքների, կաշառակերության, կոռուպցիայի, անարժանահավատ հաշվապահական գրքերի և գրառումների, ոչ համարժեք ներքին վերահսկողության և/կամ փողերի լվացման վերաբերյալ, այդ թվում, ԱՄՆ-ի՝ «Արտերկրում գործող կոռուպցիոն պրակտիկայի մասին օրենքը»), լինեն դրանք տեղական, նահանգային, դաշնային կամ օտարերկրյա: Ապրանքները, ծառայությունները, Ամպային ծառայությունները, մասերը, բաղադրիչները, սարքերը, ծրագրային ապահովումը, տեխնոլոգիան և սույն ԳԴ-ի պայմանների համաձայն տրամադրված այլ նյութեր, (միասին, «Նյութեր»), որոնք կարող են ենթարկվել մեկ կամ ավելի երկրների արտահանման իրավասությանը: Մատակարարը կհամապատասխանի Ապրանքների ներմուծման կամ արտահանման համար կիրառելի բոլոր համապատասխան օրենքներին և կանոնակարգերին, ներառյալ, բայց չսահմանափակվելով, առևտրային օրենքներով, ինչպիսիք են ԱՄՆ Արտահանման կառավարման կանոնակարգերը կամ այլ վերջնական օգտագործողի, վերջնական օգտագործման և նպատակակետի սահմանափակումները ԱՄՆ-ի և այլ կառավարությունների կողմից, ինչպես նաև պատժամիջոցների կանոնակարգերը, որոնք կառավարվում են ԱՄՆ արտաքին ակտիվների վերահսկողության գրասենյակի կողմից («Առևտրային օրենքներ»): Մայքրոսոֆթը կարող է անմիջապես կասեցնել կամ դադարեցնել սույն ԳԴ-ի պայմաններն այնքանով, որքանով Մայքրոսոֆթը ողջամտորեն կեզրակացնի, որ շարունակական կատարումը կխախտի Առևտրի մասին օրենքները կամ կոչի այն պատժամիջոցների կամ տուգանքների ենթարկվելու վտանգի տակ՝ Առևտրային օրենքների համաձայն: Մատակարարը համաձայնում է տրամադրել Մայքրոսոֆթին ներմուծման/արտահանման վերահսկման դասակարգում և տեղեկատվություն, այդ թվում ներմուծման, արտահանման կամ վերաարտահանման թույլտվությունների գործող փաստաթղթերի և ցանկացած ապրանքների ներմուծման, արտահանման կամ վերաարտահանման ընթացակարգերի և/կամ արտոնագրերի համար անհրաժեշտ փաստաթղթեր՝ Մայքրոսոֆթի համար առանց լրացուցիչ ծախսերի: Լրացուցիչ տեղեկությունների համար այցելե՛ք <https://www.microsoft.com/en-us/exporting>: «Օրենք» նշանակում է կիրառելի բոլոր օրենքները, կանոնները, կանոնադրությունները, հրամանագրերը, որոշումները, կարգադրությունները, կանոնակարգերը, վճիռները, օրենսգրքերը, որոշումները, բանաձևերը և պահանջները, որոնք ցանկացած պետական մարմնի (դաշնային, պետական, տեղական կամ միջազգային) իրավասություն ունեն,
- g.** Մատակարարը կենթարկվի գործող Հակակոռուպցիոն օրենքներին: Սույն ԳԴ-ի պայմանների կատարման ընթացքում Մատակարարը պարտավորվում իր աշխատակիցներին վերապատրաստման հնարավորություն տրամադրել՝ ենթարկվելով գործող հակակոռուպցիոն օրենքներին և Մայքրոսոֆթի խնդրանքով կապահովի Մայքրոսոֆթի կողմից պահանջվող առցանց ստուգարտ վերապատրաստում՝ մատակարարների կողմից Հակակոռուպցիոն օրենքներին համապատասխանելու համար:
- h.** Մատակարարն իր հաշվին. (1) կիրականացնի և կպահպանի համապատասխան տեխնիկական և կազմակերպչական միջոցառումներ՝ պաշտպանելու Մայքրոսոֆթի Նյութերը, Ներառյալ Անձնական տվյալները և Մայքրոսոֆթի ցանկացած այլ գաղտնի տեղեկատվություն՝ պատահական կամ ապօրինի ոչնչացումից, կորուստից, փոփոխությունից, չթույլատրված բացահայտումից կամ մուտքի պաշտպանությունից՝ ներառյալ անձնական տվյալները կամ Մայքրոսոֆթ՝ փոխանցված, պահպանված կամ այլ կերպ մշակված ցանկացած այլ գաղտնի տեղեկատվություն, (2) առևտրային և տեխնոլոգիական առումով հնարավոր լինելուն պես, վերացնել ցանկացած Նյութական խոցելիություն, որի մասին Մատակարարը տեղյակ է դառնում, և (3) կհամապատասխանի Մատակարարի գաղտնիության, անձեռնմխելիության և տվյալների պաշտպանության

պարտավորություններին, որոնք ներկայացված են սույն ԳՊ դրույթներով՝ ներառյալ 15-րդ, 16-րդ բաժինները և հավելված Ա-ն:

- 14. Դադարեցում:** Մայքրոսոֆթը կարող է դադարեցնել սույն ԳՊ դրույթները կամ գործող ԱԴ-ները որևէ պատճառով կամ առանց պատճառի: Դադարեցումը ուժի մեջ կմտնի գրավոր ծանուցման պահից: Եթե դադարեցումը տեղի է ունենում Մայքրոսոֆթի նախաձեռնությամբ, ապա վերջինիս միակ պարտավորությունը կլինի վճարել:
- a. մինչև դադարեցման ամսաթիվը ընդունված Առաքման ենթակա տարրերի կամ Ապրանքների համար, կամ
  - b. Մատուցված Ծառայությունների համար, որոնցից Մայքրոսոֆթ կորպորացիան կշարունակի օգտվել՝ դադարեցումից հետո կամ
  - c. Ամպային ծառայություններ, որոնք մատուցվել են մինչև դադարեցման ուժի մեջ մտնելու ամսաթիվը (կամ Մայքրոսոֆթի կողմից պահանջված և դադարեցմանը հաջորդող ցանկացած գործողություն): Մատակարարը (առանց Մայքրոսոֆթի որևէ այլ միջոցների նկատմամբ որևէ նախապաշարմունքի) Մայքրոսոֆթին կտրամադրի համամասնական փոխհատուցում՝ ցանկացած չօգտագործված կանխավճարային գումարների համար:
- 15. Անվտանգություն, գաղտնիություն և տվյալների պաշտպանություն:** Մատակարարը պարտավորվում է ենթարկվել հետևյալին՝ իր հաշվին և իր սեփական միջոցներով:
- a. Սույն ԳՊ դրույթների ներքո առանց Մայքրոսոֆթի իրավունքները սահմանափակելու Մատակարարը պարտավորվում է (1) մասնակցել Մայքրոսոֆթի կողմից պահանջվող Մայքրոսոֆթի՝ Մատակարարի Անվտանգության և Գաղտնիության ապահովման (“SSPA”) ծրագրին՝ այդ թվում՝ հաստատելով Մատակարարի համապատասխանության կարգավիճակը Մայքրոսոֆթի գործող և տվյալ ժամանակահատվածում Մատակարարի տվյալների պահպանման կիրառելի պահանջների բոլոր գործող մասերին՝ («ՏՊԿ [DPR]») տարեկան կտրվածքով (կամ ավելի հաճախ, ՏՊԿ-ի լրացուցիչ մասերի կիրառելի լինելու պարագայում և (2) համապատասխանել Մայքրոսոֆթի տվյալ ժամանակ գործող ՏՊԿ-ին: Տե՛ս <https://www.microsoft.com/en-us/procurement/supplier-contracting.aspx>, <https://aka.ms/sspa> **Մատակարարի անվտանգության և գաղտնիության ապահովման (SSPA) (aka.ms)**, SSPA ծրագրի մանրամասների համար՝ ներառյալ ծրագրի պահանջները և գործող ՏՊԿ-ն:
  - b. Մատակարարի անվտանգության ընթացակարգերը պետք է ներառեն ռիսկի գնահատում և վերահսկում հետևյալների համար. (1) համակարգի հասանելիություն. (2) համակարգի և կիրառական ծրագրերի մշակում և սպասարկում. (3) փոփոխությունների կառավարում. (4) ակտիվների դասակարգում և վերահսկում. (5) միջադեպերի արձագանք, ֆիզիկական և շրջակա միջավայրի անվտանգություն. (6) աղետների վերականգնում / բիզնեսի շարունակականություն. և (7) աշխատողների վերապատրաստում: Այդ միջոցներն սահմանվելու են Մատակարարի անվտանգության բաղաձայնությամբ: Մատակարարն այդ բաղաձայնությունը, Ծառայությունների համար նախատեսված անվտանգության հսկողության նկարագրությունները, ինչպես նաև Մատակարարի անվտանգության գործելակերպի և բաղաձայնության վերաբերյալ՝ Մայքրոսոֆթի կողմից ողջամտորեն հայցված այլ տեղեկատվությունը Մայքրոսոֆթի խնդրանքով հասանելի կդարձնի Մայքրոսոֆթին:
  - c. Ամպային ծառայություններ մատուցելիս՝ Մատակարարը կօգտագործի միայն ամպային ենթակառուցվածքի մատակարար (“CIP”), որը նշված է գործող ԱԴ-ում և այդ մասին կտեղեկացնի Մայքրոսոֆթին 90 օր առաջ նախքան այն կփոփոխի, կավելացնի կամ կնախաձեռնի CIP-ն փոփոխելու որևէ պլան, և առնվազն 30 օր առաջ՝ նախքան Մայքրոսոֆթի Նյութերի գտնվելու վայրի ցանկացած փոփոխությունը: Եթե Մայքրոսոֆթը մերժի փոփոխությունը, այն կարող է անհապաղ դադարեցնել կիրառելի ԱԴ-ը՝ առանց հետագա պարտավորությունների:

d. Մատակարարը կհամապատասխանի Հավելված Ա-ում ներկայացված գաղտնիության և տվյալների պաշտպանության պահանջներին:

e. Առանց սահմանափակելու սույն ԳԴ-ի պայմաններով նախատեսված Մատակարարի պարտավորությունները՝ Ներառյալ ՏՊԿ-ն՝ կապված Անձնական տվյալների հետ, անվտանգության որևէ միջադեպի (ստորև սահմանված) մասին տեղեկանալիս, Մատակարարը պարտավորվում է.

- (1) տեղեկացնել Մայքրոսոֆթին՝ առանց Անվտանգության միջադեպի անհարկի հետաձգման (ամեն դեպքում, ոչ ուշ, քան այն տեղեկացնում է որևէ Մատակարարի նմանապես տեղակայված հաճախորդներին և բոլոր դեպքերում, նախքան Մատակարարը կատարում է ընդհանուր հանրային որևէ բացահայտում (օր.՝ մամլո հաղորդագրություն)),
- (2) անհապաղ ուսումնասիրել կամ անհրաժեշտ աջակցություն տրամադրել անվտանգության միջադեպի ուսումնասիրության համար, ինչպես նաև Մայքրոսոֆթին տրամադրել անվտանգության միջադեպի մասին մանրամասն տեղեկատվություն, Ներառյալ անվտանգության միջադեպի բնույթի նկարագրությունը, ազդեցիկ տվյալների սուբյեկտների մոտավոր թիվը, անվտանգության միջադեպի ընթացիկ և կանխատեսելի ազդեցությունը և այն միջոցները, որոնք Մատակարարը ձեռնարկում է անվտանգության միջադեպը լուծելու և դրա հետևանքները մեղմելու համար, նաև
- (3) անհապաղ կձեռնարկի կոմերցիոն տեսանկյունից համար ողջամիտ քայլեր՝ Անվտանգության միջադեպի հետևանքները մեղմելու կամ Մայքրոսոֆթին այդ հարցում օգնելու համար:

«Անվտանգության միջադեպ» նշանակում է՝ (1) Մատակարարի կամ նրա ենթակապալառուների կողմից փոխանցված, պահվող կամ այլ կերպ մշակված Գաղտնի տեղեկատվության, Ներառյալ Անձնական տվյալների, պատահական կամ անօրինական ոչնչացում, կորուստ, փոփոխություն, չթույլատրված բացահայտում կամ մուտք կամ (2) Անվտանգության խոցելիություն՝ (i) կապված Մատակարարի կողմից Գաղտնի տեղեկատվության, Ներառյալ Անձնական տվյալները, կամ (ii) ազդեցություն ունեցող Մայքրոսոֆթի արտադրանքի, ծառայությունների, ծրագրաշարի, ցանցի կամ համակարգերի վրա: «Անվտանգության խոցելիություն» նշանակում է Մատակարարի կամ նրա ենթակապալառուների անվտանգության համակարգում հայտնաբերված թերություն, թուլություն կամ սխալ, որը խելամիտ հավանականություն ունի, որ ազդեցիկ կերպով կկիրառվի սպառնալիքի գործակալի կողմից:

Մատակարարը պարտավորվում է կատարել սույն 15(ե) Բաժինը՝ Մատակարարի հաշվին, եթե Անվտանգության միջադեպը չի առաջացել Մայքրոսոֆթի անփութ կամ կամայական գործողություններից կամ Մատակարարի կողմից Մայքրոսոֆթի գրավոր ցուցումներին հետևելու արդյունքում:

Մատակարարը պետք է ստանա Մայքրոսոֆթի գրավոր հաստատումը նախքան որևէ պետական մարմին, անհատին, մամուլին կամ այլ երրորդ կողմին այն Անվտանգության միջադեպի մասին տեղեկացնելը, որն ազդել է կամ ողջամտորեն կարող է ազդել Մայքրոսոֆթից Մատակարարի ստացած կամ Մայքրոսոֆթի անունից մշակված Գաղտնի տեղեկատվության վրա: Չնայած սույն 15(ե) Բաժնում առկա որևէ հակադարձող դրույթի, Մատակարարը կարող է երրորդ կողմին տեղեկացնել Անձնական տվյալների վրա ազդող Անվտանգության միջադեպի մասին, եթե նա իրավական պարտականություն է կրում դա անել՝ պայմանով, որ Մատակարարը պետք է (ա) բոլոր ջանքերը գործադրի նախապես Մայքրոսոֆթին տեղեկացնելու, որքան հնարավոր է շուտ, եթե ինքը մտադիր է երրորդ կողմին բացահայտել Անվտանգության միջադեպը, և, (բ) եթե հնարավոր չէ Մայքրոսոֆթին այդպիսի նախնական ծանուցում տալ, անմիջապես տեղեկացնի Մայքրոսոֆթին ծանուցում տալու առաջին իսկ հնարավորության առաջացման դեպքում:

Որևէ Անվտանգության միջադեպ երրորդ կողմին բացահայտելու համար Մատակարարը, Մայքրոսոֆթին իր ծանուցման շրջանակներում, կբացահայտի երրորդ կողմի ինքնությունը և ծանուցման պատճենը (եթե երրորդ կողմին ծանուցագիրը չի ուղարկվել, Մատակարարը Մայքրոսոֆթին կտրամադրի դրա սևագիրը): Մատակարարը Microsoft-ին թույլ կտա առաջարկել ծանուցման փոփոխություններ կամ թարմացումներ:

16. **Մատակարարի վարքագծի կանոնակարգը:** Մատակարարը կհամապատասխանի Մատակարարի վարքագծի ամենաարդիական կանոններին՝ <https://aka.ms/scoc> և Մայքրոսոֆթի ներկայացուցիչների ամենաարդիական հակակոռուպցիոն քաղաքականությանը՝ <http://aka.ms/microsoftethics/representatives> և ցանկացած այլ քաղաքականության (օր.՝ ֆիզիկական կամ տեղեկատվական անվտանգության քաղաքականություն) կամ վերապատրաստում, որը բացահայտվել է Մայքրոսոֆթի կողմից ԱՂ-ում կամ ժամկետի ընթացքում այլ կերպ:
17. **Հասանելիություն:** Ցանկացած սարքավորում, պրոդուկտ, վեբկայք, ինտերնետային ծրագրակազմ, ամպային ծառայություն, ծրագիր, բջջային հավելվածներ կամ բովանդակություն, որը սույն ԳՊ-ի դրույթների համաձայն մշակվել կամ տրամադրվել է Մատակարարի կամ նրա մասնաճյուղի կամ նրա անունից, պետք է համապատասխանի բոլոր իրավական և Մայքրոսոֆթի կողմից տրամադրվող հասանելիության պահանջներին, ներառյալ Մակարդակ A և AA Հաջողության սկզբունքների՝ Վեբ բովանդակության հասանելիության ուղեցույցների (“WCAG”), հրատարակված վերջին տարբերակը, որոնք հասանելի են [https://www.w3.org/standards/techs/wcag#w3c\\_all](https://www.w3.org/standards/techs/wcag#w3c_all) հասցեով: WCAG-ի ամփոփումը հասանելի է <http://www.w3.org/WAI/intro/wcag> հասցեով:
18. **Իրավունքներից ոչ մի հրաժարում:** Մայքրոսոֆթը չպետք է հրաժարվի որևէ իրավունքից կամ միջոցից՝ դրանց չկատարման կամ հապաղման հետևանքով:
19. **Անվճարունակություն, Պատասխանատվության սահմանափակումներ:**
- a. Ցանկացած կողմի անվճարունակ կամ սնանկ ճանաչվելը, սնանկության մասին հայտարարելը կամ ի շահ պարտատերերի զիջումներ կատարելը կդիտարկվի որպես սույն ԳՊ դրույթների լուրջ խախտում: Սույն ԳՊ դրույթների համաձայն «Անվճարունակություն» նշանակում է կա՛մ, (1) որ տվյալ կողմի պարտավորությունները գերազանցում են նրա ակտիվները՝ յուրաքանչյուրը օբյեկտիվորեն գնահատված, կա՛մ (2) որ տվյալ կողմը գործնական պարտավորությունների դիմաց ժամանակին վճարումներ չի կարողանում կատարել տնտեսվարման սովորական պայմաններում:
  - b. **Պարտավորության սահմանափակումներ:** ԲԱՏԱՌՈՒԹՅԱՆ ԲԱԺԻՆ 21-ՈՎ ՍԱՀՄԱՆԱԿԾ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՍՈՒՅՆ ԳՊ ԴՐՈՒՅԹՆԵՐԻ ՆԵՐՔՈ ԿՈՂՄԻ ԳԱՐՏՆՈՒԹՅԱՆ, ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ, ԱՆՁԵՌՆԻՄԵԼԻՈՒԹՅԱՆ, ՏՎՅԱԼՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԽԱՆՏՈՒՄԸ, ԶԱՐԱՇԱՀՈՒՄԸ, ԱՐԱՎԱՐՈՒՄԸ ԿԱՄ ՍՈՒՅՆ ԳՊ ԴՐՈՒՅԹՆԵՐԻՆ ԱՌՆՉԿՈՂ ՄՍ ԻՐԱՎՈՒՆԵՐԻ ԱՊՕՐԻՆԻ ՅՈՒՐԱՑՈՒՄԸ ԿԱՄ ԽԱՐԱԽՈՒԹՅՈՒՆԸ, ԿՈՂՄԵՐԻՑ ՈՉ ՄԵԿԸ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆ ԶԻ ԿՐԻ ՄՅՈՒՄ ԿՈՂՄԻ ԱՆՈՒՂԱԿԻ, ՈՐՊԵՍ ՀԵՏԵՎԱՆՔ, ՀԱՏՈՒԿ, ՕՐԻՆԱԿԵԼԻ ԿԱՄ ՊԱՏԺԻՉ ՎՆԱՍՆԵՐԻ ՀԱՄԱՐ (ՆԵՐԱՌՅԱԼ ՏՎՅԱԼՆԵՐԻ, ԵՎԱՍՈՒՏՆԵՐԻ ԵՎ (ԿԱՄ) ՇԱՀՈՒԹՅԻ ԿՈՐԱՍԻ ՎՆԱՍԸ՝ ԿԱՆԱՏԵՍԵԼԻ ԿԱՄ ԱՆԿԱՆԱՏԵՍԵԼԻ, ՈՐՈՆՔ ԲԽՈՒՄ ԵՆ ՍՈՒՅՆ ԳՊ ԴՐՈՒՅԹՆԵՐԻՑ՝ ԱՆԿԱՆ ՆՐԱՆԻՑ, ԹԵ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՀԻՄՆԱԿԸ Ե ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԽԱՆՏՄԱՆ, ԴՐԺՄԱՆ, ԽԻՍՏ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ, ԵՐԱՇԽԻՔՆԵՐԻ ԽԱՆՏՄԱՆ ԿԱՄ ԱՅԼ ԿԵՐՊ, ՆՈՒՅՆԻՍԿ, ԵԹԵ ԿՈՂՄԻՆ ԶԳՈՒՇԱՑՎԵԼ Ե ԱՅՐ ՎՆԱՍՆԵՐԻ ՀԱՎԱՆԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ:
20. **Ենթապայմանագրեր:** Առանց Մայքրոսոֆթի նախնական գրավոր համաձայնության Մատակարարը Ապրանքները, Ծառայությունները և Ամպային ծառայությունները մատուցելու նպատակով չպետք է կնքի ենթապայմանագիր որևէ երրորդ կողմի հետ: Եթե Մատակարարը որևէ ենթակապալառուի պատվիրում է որևէ Ծառայություն կամ Ամպային ծառայություններ, Մատակարարը լիովին պատասխանատվություն է կրելու Մայքրոսոֆթի առջև ենթակապալառուի ցանկացած գործողությունների կամ անգործության համար, սույն ԳՊ դրույթների ներքո

պատասխանատու է լինելու ստանձնած բոլոր պարտավորությունների համար, և պահանջելու է ենթակապալառուից գրավոր համաձայնել Մայքրոսոֆթի ոչ պակաս պաշտպանական պայմաններին, որոնք կիրառելի են ենթակապալառուի կատարած աշխատանքի նկատմամբ՝ ներառյալ այս ԳՊ դրույթների և Հավելված Ա-ի 15-րդ բաժնում ներառված գաղտնիության և տվյալների պաշտպանության պայմանները:

**21. Փոխհատուցում և այլ միջոցներ:**

- a. Մատակարարը պետք է պաշտպանի, փոխհատուցի և զերծ պահի Մայքրոսոֆթին և Մայքրոսոֆթի մասնաճյուղերին բոլոր տեսակի հայցերից, պահանջներից, կորուստներից, վճարներից, վնասներից և գործողություններից՝ (1) սույն ԳՊ դրույթների շրջանակներում Մայքրոսոֆթին տրամադրվող Ապրանքներից, Ծառայություններից և Ամպային ծառայություններից բխող ցանկացած երրորդ կողմի ՄՍ կամ ՄՍ իրավունքներ կամ այլ սեփականության իրավունքների փաստացի կամ ենթադրվող խախտումներ, (2) ցանկացած պահանջ, որը, արդարացի լինելու դեպքում, կհանդիսանա 15-րդ Բաժնի Հավելված Ա-ով սահմանված Մատակարարի ցանկացած երաշխիքի խախտում, (3) հարկային պարտավորությունների կամ օրենքի չկատարում, բացթողում կամ դրանց չենթարկվել՝ Մատակարարի կամ Մատակարարի գործակալների, աշխատակիցների կամ ենթակապալառուների կողմից, (4) Մատակարարի կան նրա ենթակապալառուների կողմից գաղտնիության, անվտանգության, գաղտնիության, տվյալների պաշտպանության կամ հանրային պարտավորությունների ցանկացած խախտում սույն ԳՊ-ի պայմանների ներքո, (5) մատակարարի կամ նրա ենթակապալառուների կողմից թույլ տրված որևէ զանցառու կամ միտումնավոր գործողություններ կամ բացթողումներ, որոնց արդյունքում առաջանում են մարմնական վնասվածքներ կամ մահվան դեպքեր, կամ շոշափելի կամ ոչ շոշափելի սեփականության կորուստ, անհետացում կամ վնասվածք, և (6) իր աշխատակիցների, դուստր կազմակերպությունների կամ ենթակապալառուների կողմից ցանկացած հայցեր՝ անկախ նրանից, թե ինչ հիմքերով են ներկայացված, ներառյալ, սակայն չսահմանափակվելով հաշվարկների, դատավճիռների և փաստաբանների ողջամիտ գումարների վճարումներով:
- b. Մայքրոսոֆթին հասանելի բոլոր այլ միջոցներից բացի, եթե այդ ԳՊ-ի պայմանների ներքո գտնվող Ապրանքների, Ծառայությունների կամ Ամպային ծառայությունների օգտագործումն արգելված է, արգելանքը սպառնում է կամ կարող է խախտել գործող օրենքը, Մատակարարն իր հաշվին կտեղեկացնի Մայքրոսոֆթին և անմիջապես կփոխարինի կամ կփոփոխի այդպիսի Ապրանքներն ու ծառայությունները, որպեսզի դրանք չխախտեն և համապատասխանեն գործող օրենսդրությանը, ինչպես նաև կիրառելի լինեն Մայքրոսոֆթի համար: Եթե Մատակարարը չի համապատասխանում սույն բաժնի 21(բ) կետին, ապա ի հավելումն 21-րդ բաժնով (փոխհատուցում և այլ միջոցներ) փոխհատուցված ցանկացած գումարներին, Մատակարարը պարտավոր է վերադարձնել Մայքրոսոֆթի կողմից վճարված բոլոր գումարները Ապրանքների Ծառայությունների և Ամպային ծառայությունների խախտման համար, ինչպես նաև նոր Մատակարարի կողմից մատուցված անցումային ծառայությունների և ամպային ծառայությունների ողջամիտ ծախսերը:

- 22. Ապահովագրություն:** Մատակարարը պետք է ապահովի բավարար ապահովագրություն, որպեսզի համապատասխանի սույն ԳՊ դրույթներով և գործող օրենքով պահանջվող պարտավորություններին: Մատակարարի ապահովագրությունը պետք է ներառի հետևյալ ծածկույթը (կամ համապատասխան տեղական արժույթով) այն դեպքում, երբ Այս ԳՊ դրույթները կամ գործող ԱԴ-ը առաջացնում է ռիսկեր, որոնք սովորաբար ապահովվում են հետևյալ ապահովագրական քաղաքականություններով.

**Աղյուսակ Ա1– Պահանջվող Ապահովագրական ծածկույթ**

Ծածկույթ	Ձև	Սահմանափակում
----------	----	---------------

Առևտրային ընդհանուր պարտավորություն, ներառյալ պայմանագրային և ապրանքի պարտավորություն <sup>2</sup>	Դեպքեր	\$500,000 ԱՄՆ
Ավտոմեքենայի պարտավորություն	Դեպքեր	\$500,000 ԱՄՆ
Կոմերցիոն ողջամտության սահմաններում կիբերանվտանգության պարտավորություն (ներառյալ տվյալների ոչնչացման, խարդախության կամ կանխամտածված խախտումների, տվյալների խախտման հետ կապված ճգնաժամային կառավարման գործունեության և անվտանգության խախտումների համար իրավական հայցերի, գաղտնիության խախտման և ծանուցման ծախսեր)	Մեկ պահանջի համար	\$2,000,000 ԱՄՆ
Աշխատողների փոխհատուցում	Կանոնադրական	Կանոնադրական
Գործատուի պարտավորություն	Դեպքեր	\$ 100,000 ԱՄՆ
Մասնագիտական պարտավորություն/E&O, որը ծածկում է երրորդ կողմի սեփականության իրավունքները (օր.՝ հեղինակային իրավունքը և ապրանքային նշանը), եթե նման ապահովագրությունը ողջամտորեն հնարավոր է կոմերցիոն տեսանկյունից	Մեկ պահանջի համար <sup>3</sup>	\$2,000,000 ԱՄՆ

#### ՆՇՈՒՄՆԵՐ.

- <sup>1</sup> Մեկ պահանջի կամ դեպքի բոլոր սահմանները, եթե կանոնադրական պահանջներն այլ կերպ չեն կարող վերածվել տեղական արժույթի:
- <sup>2</sup> Մատակարարը պետք է նշի Մայքրոսոֆթին, Նրան դուստր ընկերություններին և Նրանց համապատասխան ղեկավարներին, պաշտոնյաներին և աշխատողներին, որպես լրացուցիչ ապահովագրվող մարմիններ Ընդհանուր առևտրային պարտավորության քաղաքականության մեջ՝ Մատակարարի կողմից Բաժին 21-ում ընդունված պայմանագրային պարտավորության սահմաններում:
- <sup>3</sup> Կունենա ապահովագրության հակադարձ ամսաթիվ՝ այս ԳՊ դրույթների կամ գործող ԱԴ-ի կամ Պատվերի ամսաթվից ոչ ուշ: Մատակարարը պետք է ապահովի քաղաքականության ակտիվ ծածկույթ կամ երկարաձգված հաշվետու ժամանակաշրջան՝ ապահովելով այնպիսի հայցերի բավարարումը, որոնք առաջին անգամ ներկայացվել են և որոնց մասին ապահովագրական ընկերությանը զեկուցվել է սույն ԳՊ դրույթների դադարեցումից կամ ժամկետի սպառումից կամ գործող ԱԴ-ի կամ Պատվերի իրականացումից հետո 12 ամիսների ընթացքում:

Մատակարարը պետք է ստանա Մայքրոսոֆթի նախնական գրավոր հաստատումը՝ ցանկացած դեպքի կամ վթարի պարագայում նվազեցվող գումարի կամ հետպահումի համար, որը գերազանցում է \$100,000 ԱՄՆ: Պահանջի դեպքում, Մատակարարը պետք է Մայքրոսոֆթ կորպորացիային ներկայացնի սույն ԳՊ դրույթների շրջանակներում նախատեսված ապահովագրության իրականացման ապացույցներ: Մատակարարը պարտավոր է հնարավորինս սեղմ ժամկետներում ձեռք բերել լրացուցիչ ծածկույթ և գրավոր տեղեկացնել Մայքրոսոֆթին, եթե Մայքրոսոֆթը հիմնավոր կերպով որոշի, որ Մատակարարի ծածկույթն ավելի պակաս է, քան պահանջվում է իր պարտավորությունները կատարելու համար:

- 23. Գաղտնի նյութերի չբացահայտման պայմաններ:** Եթե կողմերի միջև կնքվել է Մայքրոսոֆթի ստանդարտ Զբացահայտման համաձայնագիր, ապա կկիրառվեն այդ համաձայնագրի դրույթները և կներառվեն սույն ԳՊ դրույթներում, իսկ ԳՊ-ի բոլոր դրույթները և պայմանները, ինչպես նաև Մայքրոսոֆթի նյութերը կհամարվեն գաղտնի տեղեկություններ: Եթե կողմերի միջև չի կնքվել Մայքրոսոֆթի ստանդարտ Զբացահայտման համաձայնագիր, ապա Մատակարարը համաձայնվում է, որ սույն ԳՊ դրույթների գործողության ամբողջ ընթացքում, ինչպես նաև դրա ավարտից հետո 5 տարիների ընթացքում Մատակարարը խիստ գաղտնիության պայմաններում կպահի Մայքրոսոֆթի բոլոր գաղտնի տեղեկությունները, չի օգտագործի դրանք և չի բացահայտի

որևէ երրորդ կողմին (բացառությամբ Մայքրոսոֆթի դուստր ձեռնարկության): «Մայքրոսոֆթի Գաղտնի տեղեկատվություն» տերմինը նշանակում է ոչ հրապարակային այն ողջ տեղեկատվությունը, որոնք Մայքրոսոֆթը կամ նրա մասնաճյուղը գրավոր կամ բանավոր նշում է որպես գաղտնի, կամ որը, բացահայտման պայմաններում, պետք է մատնանշի ողջամիտ անձի առ այն, որը տվյալ տեղեկատվությունը պետք է դիտարկի որպես գաղտնի: Չնայած սույն ԳՊ դրույթներին հակառակ որևէ բանի, սույն ԳՊ դրույթներով Մատակարարին կամ նրա Մասնաճյուղին տարածված ողջ անձնական տեղեկությունները համարվում են Մայքրոսոֆթի Գաղտնի տեղեկատվությունը: Եթե Մատակարարը վստահ չէ, թե որ տեղեկություններն են համարվում Մայքրոսոֆթի գաղտնի տեղեկություններ, Մատակարարը պետք է խորհրդակցի Մայքրոսոֆթի հետ: Microsoft-ի գաղտնի տեղեկությունները չեն ներառելու այնպիսի տեղեկություններ, որոնք Մատակարարին հայտնի էին Microsoft-ի կողմից դրանք Մատակարարին բացահայտելուց առաջ կամ այնպիսի տեղեկությունները, որոնք հանրությանը հայտնի են դարձել ոչ Մատակարարի մեղքով:

- 24. Անկախ զարգացում:** Այս ԳՊ դրույթներում ոչ մի բան չի սահմանափակում Մայքրոսոֆթի կարողությունը ուղղակիորեն կամ անուղղակիորեն ձեռք բերել, լիցենզավորել, զարգացնել, արտադրել կամ տարածել նույն կամ նմանատիպ տեխնոլոգիա կամ ծառայություններ այդ ԳՊ դրույթների կողմից դիտարկվող Ապրանքների, Ծառայությունների կամ Ամպային ծառայությունների վերաբերյալ: Մայքրոսոֆթը կարող է օգտագործել, շուկայացնել և տարածել այդպիսի նմանատիպ տեխնոլոգիա կամ ծառայություններ, ի հավելումն սույն ԳՊ դրույթների կողմից մտածված տեխնոլոգիաներին կամ ծառայություններին կամ դրանց փոխարեն, ներառյալ ցանկացած ծրագրային կամ ամպային ծառայություններ (ամբողջությամբ կամ մասնակիորեն):
- 25. Աուդիտ:** Սույն ԳՊ դրույթների գործողության ընթացքում և դրանից հետո 4 տարվա ընթացքում Մատակարարը պետք է վարի կանոնավոր ու համապատասխան հաշվառումներ ու հաշվարկներ, ինչպես նաև Ապրանքներին, Ծառայություններին կամ Ամպային ծառայություններին ու անձնական տվյալների մշակմանը («Մատակարարի գրառումներ») առնչվող որակի ու կատարողականի հաշվետվություններ: Այս ժամանակահատվածում Մայքրոսոֆթը կարող է աուդիտ անել Մատակարարին և/կամ ստուգել Մատակարարի համապատասխանությունը ԳՊ դրույթներին, ներառյալ գաղտնիությունը, անվտանգությունը, արտահանման համապատասխանությունը, հասանելիությունը և հարկերը: Մայքրոսոֆթը կամ նրա կողմից նշանակված անկախ խորհրդատուն կամ հավաստագրված հանրային հաշվապահը («Աուդիտոր») կանցկացնի աուդիտներ և ստուգումներ: Մայքրոսոֆթը ողջամիտ ժամկետներում (15 օր, բացառությամբ արտակարգ դեպքերի պարագայում) կծանուցի Մատակարարին՝ նախքան աուդիտի կամ վերստուգման մեկնարկը և կիրահանի Աուդիտորին հնարավորինս չխանգարել Մատակարարի գործունեությանը, ներառյալ աուդիտների համախմբումը, որտեղ դա կիրառելի է: Մատակարարը համաձայնվում է Մայքրոսոֆթի կողմից նշանակված աուդիտի կամ ստուգման թիմի անդամներին հնարավորություն ընձեռել մատչելու Մատակարարի համապատասխան գրառումներին և միջոցներին: Եթե աուդիտորները որոշեն, որ Մայքրոսոֆթը Մատակարարին վճարել է հավելյալ գումարներ, Մատակարարը պետք է Մայքրոսոֆթին փոխհատուցի նշված հավելավճարները: Եթե Մատակարարը աուդիտի ժամանակահատվածում Մայքրոսոֆթից 5%-ից ավել գումար է վերցրել, ապա անմիջապես վերադարձնում է Մայքրոսոֆթին բոլոր գերավճարները՝ ներառյալ վճարում է այդ գերավճարի տոկոսագումար՝ ամսական 0,5%-ի չափով: Մայքրոսոֆթը կհոգա իր աուդիտորների կամ ստուգում իրականացնող թիմի բոլոր ծախսերը: Այնուամենայնիվ, եթե աուդիտի արդյունքում պարզվի, որ աուդիտի ենթարկված ժամանակահատվածում Մատակարարը Մայքրոսոֆթին վճարել է 5%-ի կամ ավել չափով հավելյալ գումարներ, Մատակարարը պետք է փոխհատուցի Մայքրոսոֆթին հավելյալ վճարած գումարները: Սույն ԳՊ դրույթների որևէ այլ բաժնի ոչ մի դրույթ չի սահմանափակում Մայքրոսոֆթին աուդիտի ենթարկելու Մատակարարին:
- 26. Փոխանցումներ:** Սույն ԳՊ դրույթներով նախատեսված ոչ մի իրավունք կամ պարտավորություն (ներառյալ վճարման ենթակա գումարներ ստանալու իրավունքը) չպետք է փոխանցվի առանց Մայքրոսոֆթի նախնական գրավոր համաձայնության: Առանց նման համաձայնության ցանկացած փոխանցում անվավեր կհամարվի: Սույն ԳՊ դրույթների շրջանակներում Microsoft-ը կարող է փոխանցել իր իրավունքները:



27. **Աշխատանքային վեճերի մասին ծանուցում:** Այն դեպքում, երբ փաստացի կամ հնարավոր աշխատանքային վեճը հետաձգում է կամ կարող է հետաձգել սույն ԳՊ-ի դրույթների իրականացումը, Մատակարարը պետք է անմիջապես գրավոր կերպով Մայքրոսոֆթին տեղեկացնի նման վեճի և դրա համապատասխան մանրամասների վերաբերյալ: Մատակարարը պետք է վերը նկարագրված պահանջին համարժեք պահանջ ներառի նաև բոլոր ենթապայմանագրերում և, նման ծանուցում ստանալուց անմիջապես հետո, Microsoft-ին գրավոր տեղեկացնի այդ մասին:
28. **Արտոնագրից օգտվելու լիցենզիա:** Սույն փաստաթղթում նշված այլ պայմաններից անկախ, եթե Մատակարարը չի գործում սույն ԳՊ-ի դրույթների համաձայն, ապա Մատակարարը, որպես սույն ԳՊ դրույթների կատարման մի մաս և առանց Microsoft-ի համար հետագա ծախսեր առաջացնելու, սույնով ինքնաբերաբար շնորհում է Microsoft-ին հետ չկանչվող, ոչ բացառիկ, հատկացումներ չպահանջող իրավունք և լիցենզիա՝ սույն ԳՊ դրույթների ներքո իրականացվող Առաքման առնչությամբ Մատակարարի կողմից կամ նրա անունից կատարված, մշակված կամ պրակտիկայում իրականացված բոլոր գյուտերը և հայտնագործությունները իրագործող բոլոր արտադրանքները օգտագործելու, վաճառելու, արտադրելու և արտադրությունը ապահովելու համար:
29. **Իրավասությունը և գերիշխող օրենքը:** Միացյալ Նահանգներում Մայքրոսոֆթին մատուցվող Ապրանքների, Առաքման ենթական տարրերի, Ծառայությունների և Ամպային ծառայությունների համար այս ԳՊ դրույթները կարգավորվում են Վաշինգտոն Նահանգի օրենսդրությամբ (անտեսելով իրավունքի սկզբունքների հակասությունները), և կողմերը համաձայնվում են Վաշինգտոն Նահանգի Քինգ կոմսության Նահանգային և դաշնային դատարանների բացառիկ իրավասությանը: Ամպային բոլոր ծառայությունները մատուցված են համարվում Միացյալ Նահանգներում, եթե Մայքրոսոֆթի կողմից Ամպային ծառայությունների որևէ մատչում կամ օգտագործում տեղի է ունենում Միացյալ Նահանգներում: Մայքրոսոֆթի համար մատուցվող բոլոր այլ Ապրանքների, Ծառայությունների և Ամպային ծառայությունների համար օրենքը, իրավասությունն ու անցկացման վայրն այն երկրում է, որտեղ Մայքրոսոֆթը (այսինքն, սույն ԳՊ դրույթները ստորագրող Մատակարարից բացի այլ կազմակերպություն) ընդգրկված է կամ այլ կերպ ձևակերպված է, կկարգավորվի սույն ԳՊ դրույթներով: Ոչ մի կողմ չի պահանջի այս դատարաններում անձնական իրավասության կամ ֆորում չիրավիլվելու բացակայություն: Սույն ԳՊ-ի պայմաններին առնչվող ցանկացած գործողության մեջ կամ հայցադիմումում գերիշխող կողմն իրավունք ունի վերականգնել իր ծախսերը՝ ներառյալ փաստաբանների ողջամիտ վճարները:
30. **Հրապարակայնություն, Ապրանքանշանների օգտագործում:** Մատակարարը չպետք է թողարկի մամլո հաղորդագրություններ և այլ հրապարակումներ Մայքրոսոֆթի կամ սույն ԳՊ դրույթների հետ Մատակարարի հարաբերությունների առնչությամբ՝ առանց Մայքրոսոֆթի ներկայացուցչի կողմից գրավոր համաձայնության: Գրավոր հաստատման շնորհման դեպքում Մատակարարը կարող է Մատուցվող ծառայությունների և աշխատանքի արդյունքներն օգտագործել միայն համաձայն ուղեցույցների <https://www.microsoft.com/en-us/legal/intellectualproperty/Trademarks/Usage/General.aspx>. հղումով:
31. **Բաժանելիությունը, URL-ներ:** Եթե համապատասխան իրավասություն ունեցող դատարանը անօրինական, անվավեր կամ ոչ կիրառելի ճանաչի սույն ԳՊ-ի որևէ դրույթ, ապա բոլոր մնացած դրույթները կմնան ուժի մեջ: URL-ները վերաբերում են նաև հղումներին, տեղայնացումներին և տեղեկատվությանը կամ ռեսուրսներին, որոնք կապված են այդ URL-ներում գտնվող վեբկայքերում: Կողմերից ոչ մեկը չի մտել այս ԳՊ դրույթների մեջ՝ հիմնվելով մի բանի վրա, որը չի պարունակվում կամ ներառված չէ այս ԳՊ դրույթներում: Սույն ԳՊ դրույթները պետք է մեկնաբանվեն ըստ իրենց պարզ իմաստի՝ չենթադրելով, որ դրանք պետք է հանդես գան կողմերից որևէ մեկի օգտին:
32. **Իրավական ուժի պահպանում:** Սույն ԳՊ-ի այն դրույթները, որոնք, իրենց բնույթի համաձայն, պետք է գործեն (կամ կիրառելի են այնպիսի իրադարձությունների նկատմամբ, որոնք կարող են տեղի ունենալ) սույն ԳՊ-ի դադարումից կամ ժամկետի ավարտից հետո, ուժի մեջ կմնան նաև սույն ԳՊ դրույթների դադարումից կամ գործող ԱԴ-ի ժամկետի ավարտից հետո: Փոխհատուցման բոլոր

պարտավորությունները և այլ փոխհատուցման ընթացակարգերը որպես իրավական ուժ ունեցող կհամարվեն սույն ԳՊ դրույթների և գործող ԱԴ-ի դադարումից կամ ժամկետի ավարտից հետո:

*[Այս էջի մնացած մասը դիտավորյալ է ազատ թողնված:]*

## **Հավելված A – Տվյալների պաշտպանություն**

### **ԲԱԺԻՆ 1 Ծրցանակ, առաջնահերթության կարգ և ժամկետ**

- (a) Սույն Հավելվածը փոփոխում և լրացնում է ԳՊ դրույթներով նախատեսված դրույթներն ու պայմանները, քանի որ դրանք վերաբերում են Մատակարարի կողմից անձնական տվյալների մշակմանը և Տվյալների պաշտպանության օրենքին համապատասխանությանը: Անկախ Պայմանագրին հակասող որևէ կետից, եթե կա անհամաձայնություն սույն Հավելվածի և ԳՊ պայմանների միջև, ապա գերիշխող կհամարվի սույն Հավելվածը: Սույն Հավելվածը պետք է կցվի և ներառվի ԳՊ դրույթներում:
- (b) Այս Հավելվածը կիրառվում է միայն այնքանով, որքանով Մատակարարը ստանում, պահպանում կամ մշակում է Ապրանքների, Ծառայությունների կամ Ամպային ծառայությունների հետ կապված Անձնական տվյալները կամ Գաղտնի տեղեկությունները:

### **ԲԱԺԻՆ 2 Սահմանումներ**

- (a) Մեծատառով բոլոր եզրույթները, որոնք սույն Հավելվածով սահմանված չեն, կունենան ԳՊ դրույթներում նշված իմաստները:
- (b) Հետևյալ եզրույթներն ունեն CCPA-ում (Կալիֆորնիայի Սպառողների Գաղտնիության Օրենք) դրանք տրված սահմանումները. «*Բիզնես*», «*Վաճառք*», «*Բաժնետիրություն*», «*Ծառայություններ մատուցող*», «*Կապալառու*» և «*Երրորդ կողմ*»:
- (c) «*Վերահսկող*» նշանակում է այն կազմակերպությունը, որը որոշում է Անձնական տվյալների մշակման նպատակներն ու միջոցները: «Վերահսկող»-ը ներառում է Բիզնեսը, Վերահսկողին (ինչպես այդ տերմինը սահմանված է ՏՊԸԿ-ում) և համարժեք տերմիններ Տվյալների պաշտպանության մասին օրենքներում, ինչպես պահանջում է համատեքստը:
- (d) «*Տվյալների արտահանող*» նշանակում է այն կողմը, որը (1) ունի կորպորատիվ ներկայություն կամ այլ կայուն պայմանավորվածություն իրավագործության մեջ, որը պահանջում է Տվյալների փոխանցման միջազգային մեխանիզմ և (2) փոխանցում է Անձնական տվյալներ կամ հասանելի է դարձնում Անձնական տվյալները Տվյալներ ներմուծողին:
- (e) «*Տվյալների ներմուծող*» նշանակում է այն կողմը, որը (1) գտնվում է Տվյալներն արտահանողի իրավասության միևնույն տարածքում և (2) ստանում է Անձնական տվյալներ Տվյալներ Արտահանողից կամ ի վիճակի է մատչել Տվյալներ Արտահանողի կողմից հասանելի դարձած անհատական տվյալներին:
- (f) «*Տվյալների հետ կապված միջադեպ*» նշանակում է ցանկացած`
- (1) պատահական կամ անօրինական ոչնչացում, կորուստ, փոփոխություն, չթույլատրված բացահայտում կամ մատչում դեպի Գաղտնի տեղեկություններ` ներառյալ Անձնական տվյալներ` Մատակարարի կամ դրա ենթակապալառուների կողմից փոխանցված, պահված կամ այլ կերպ մշակված, կամ
  - (2) անվտանգության խոցելիություն` կապված Մատակարարի կողմից Գաղտնի տեղեկությունների` ներառյալ Անձնական տվյալների օգտագործման հետ: «*Անվտանգության խոցելիություն*» նշանակում է Մատակարարի կամ նրա ենթակապալառուների անվտանգության համակարգում հայտնաբերված թերություն, թուլություն կամ սխալ, որը խելամիտ հավանականություն ունի, որ ազդեցիկ կերպով կկիրառվի սպառնալիքի գործակալի կողմից:
- (g) «*Տվյալների Պաշտպանության Մասին Օրենք*» նշանակում է Մատակարարի կամ Մաթրոսոֆի Նկատմամբ կիրառվող ցանկացած օրենք, որը վերաբերում է տվյալների անվտանգությանը, տվյալների պաշտպանությանը և/կամ գաղտնիությանը` ներառյալ Անձնական տվյալների մշակման և տվյալների ազատ տեղաշարժի («ՏՊԸԿ») վերաբերյալ ֆիզիկական անձանց

պաշտպանության մասին 2016թ. ապրիլի 27-ի Եվրախորհրդարանի և Եվրոպական հորհրդի (ԵՄ) 2016/679 Կանոնակարգը և Կալ. Քոբջ. Օրենսգրքի Վերնագիր 1.81.5, § 1798.100 և հաջորդ. (Կալիֆորնիայի Սպառողների Գաղտնիության Օրենք) («CCPA»), և ցանկացած այլ իրականացվող, ածանցյալ կամ հարակից օրենսդրություն, կանոն, կանոնակարգ և կարգավորող ուղեցույց՝ իր փոփոխված, երկարաձգված, ուժը կորցրած ճանաչված, փոխարինված կամ վերանայված տարբերակով:

- (h) «*Տվյալների Սուբյեկտը*» նույնականացվող ֆիզիկական այն անձն է, ով կարող է նույնականացվել ուղղակիորեն կամ անուղղակիորեն, մասնավորապես, նշելով այնպիսի նույնացուցիչ, ինչպիսին է անունը, նույնականացման համարը, գտնվելու վայրը, առցանց նույնացուցիչ, կամ այդ ֆիզիկական անձի ֆիզիկական, ֆիզիոլոգիական, գենետիկական, մտավոր, տնտեսական, մշակութային կամ սոցիալական ինքնությանը հատուկ մեկ կամ մի քանի գործոններ:
- (i) «*Ապանույնականացված տվյալներ*» նշանակում է տեղեկատվություն, որը չի կարող ողջամտորեն կապված լինել նույնականացման կամ նույնականացման ենթակա անձի հետ:
- (j) «*ԵՏԳ*» նշանակում է Եվրոպական տնտեսական տարածք:
- (k) «*Անձնական տվյալներ*» նշանակում է ցանկացած տեղեկատվություն, որը վերաբերում է նույնականացված կամ նույնականացվող ֆիզիկական անձին («Տվյալների սուբյեկտ») և ցանկացած այլ տվյալ կամ տեղեկատվություն, որը հանդիսանում է անձնական տվյալներ կամ անձնական տեղեկատվություն՝ Տվյալների պաշտպանության մասին որևէ գործող օրենքի համաձայն: Նույնականացվող ֆիզիկական անձը այն անձն է, որը կարող է նույնականացվել ուղղակիորեն կամ անուղղակիորեն, մասնավորապես, նշելով այնպիսի նույնացուցիչ, ինչպիսին է անունը, նույնականացման համարը, գտնվելու վայրը, որևէ առցանց նույնացուցիչ, կամ այդ ֆիզիկական անձի ֆիզիկական, ֆիզիոլոգիական, գենետիկական, մտավոր, տնտեսական, մշակութային կամ սոցիալական ինքնությանը հատուկ մեկ կամ մի քանի գործոններ:
- (l) «*Մշակում*» կամ «*Մշակել*» նշանակում է անձնական տվյալների վրա կատարված ցանկացած գործողություն կամ գործողությունների շարք՝ ավտոմատ կամ ոչ ավտոմատ միջոցներով, ինչպիսիք են հավաքագրումը, ձայնագրումը, կազմակերպումը, կառուցումը, պահպանումը, հարմարեցումը կամ փոփոխումը, որոնումը, խորհրդատվությունը, օգտագործումը, փոխանցման միջոցով բացահայտումը, տարածումը կամ այլ կերպ մատչելը, համապատասխանեցնելը կամ համադրելը, սահմանափակելը, ջնջելը կամ ոչնչացնելը:
- (m) «*Մշակող*» նշանակում է կազմակերպություն, որը մշակում է Անձնական տվյալները մեկ այլ կազմակերպության անունից: «Մշակողը»-ը ներառում է Ծառայության Մատակարարին, Կապալառուին, Մշակողին (ինչպես այդ տերմինը սահմանված է ՏՊԸԿ-ում) և համարժեք եզրույթներ Տվյալների պաշտպանության մասին օրենքներում, ինչպես պահանջում է համատեքստը:
- (n) «*Կեղծանուն տվյալներ*» նշանակում է տեղեկատվություն, որը չի կարող վերագրվել կոնկրետ անձի՝ առանց լրացուցիչ տեղեկությունների օգտագործման պայմանով, որ այն պահվում է առանձին և ենթակա է համապատասխան տեխնիկական և կազմակերպչական միջոցառումների՝ երաշխավորելու, որ դրանք անհատին չեն վերագրվում:
- (o) «*Չգայուն տվյալներ*» նշանակում է տվյալների հետևյալ տեսակներն ու կատեգորիաները. (1) տվյալներ, որոնք բացահայտում են ռասայական կամ էթնիկ ծագումը, քաղաքական կարծիքները, կրոնական կամ փիլիսոփայական համոզմունքները կամ արհմիության անդամակցությունը, գենետիկական տվյալներ, (2) կենսաչափական տվյալներ, (3) առողջությանը վերաբերող տվյալներ, ներառյալ առողջապահական պաշտպանված տեղեկատվությունը, որը կարգավորվում է Առողջության ապահովագրության տեղափոխելիության և հաշվետվողականության ակտով, (4) տվյալներ ֆիզիկական անձի սեռական կյանքի կամ սեռական կողմնորոշման վերաբերյալ. (5) պետական նույնականացման համարներ (օր.՝ SSN-ներ, վարորդական իրավունք); (6) վճարային քարտի տվյալներ. (7) ոչ հրապարակային անձնական տեղեկատվություն, որը կարգավորվում է Gramm Leach Bliley Act-ով, (8) չգաղտնագրված նույնացուցիչ՝ գաղտնաբառի կամ մուտքի այլ կոդի հետ համատեղ, որը թույլ կտա մուտք գործել տվյալների սուբյեկտի հաշիվ, (9) անձնական

բանկային հաշվեհամարներ, (10) երեխաների հետ կապված տվյալներ և (11) ճշգրիտ տեղաբաշխում:

- (բ) «Ստանդարտ պայմանագրային դրույթներ» նշանակում է Եվրոպական միության ստանդարտ պայմանագրային դրույթներ՝ Եվրոպական տնտեսական տարածքից դուրս երրորդ երկրներ միջազգային փոխանցումների համար, Հանձնաժողովի 2021 թվականի հունիսի 4-ի 2021/914 կիրարկող որոշումը (ԵՄ), հասանելի է [https://ec.europa.eu/info/law/law-topic/data-protection/international-dimension-data-protection/standard-contractual-clauses-scc\\_en](https://ec.europa.eu/info/law/law-topic/data-protection/international-dimension-data-protection/standard-contractual-clauses-scc_en) հասցեով:
- (գ) «Ենթամշակող» նշանակում է մշակող, որը ներգրավված է որպես Մշակող հանդես եկող կողմի կողմից:

### **ԲԱԺԻՆ 3 Կողմերի անձնական տվյալների մշակման գործողությունների և կողմերի կարգավիճակների նկարագրությունը**

- (ա) Հավելված 1-ը նկարագրում է Մշակող կողմերի նպատակները, մշակման մեջ ներգրավված անձնական տվյալների տեսակները կամ կատեգորիաները, ինչպես նաև մշակման ազդակի հանդիսացող Տվյալների սուբյեկտների կատեգորիաները:
- (բ) Հավելված 1-ում թվարկված են կողմերի կարգավիճակները՝ Տվյալների պաշտպանության մասին համապատասխան օրենքի համաձայն:
- (ց) Մշակման առարկան ու տևողությունը, մշակման բնույթն ու նպատակը և անձնական տվյալների տեսակն ու տվյալների սուբյեկտների անվանակարգերը նկարագրված կլինեն աշխատանքի հայտարարության, Մայքրոսոֆթի գնման պատվերի կամ գրավոր համաձայնության մեջ՝ ստորագրված կողմերի փազորված ներկայացուցիչների կողմից, որը ԳՊ դրույթների անբաժանելի մասն է կազմում: Նման պարագայում առավել հատկորոշ նկարագրությունը կգերակայի Հավելված 1-ին:

### **ԲԱԺԻՆ 4 Տվյալների միջազգային փոխանցում**

- (ա) Որոշ օրենսդրություններ պահանջում են, որ Անձնական տվյալներն այլ իրավասության ստացողին փոխանցող կազմակերպությունը լրացուցիչ միջոցներ ձեռնարկի՝ ապահովելու համար, որ Անձնական տվյալներն ունենան հատուկ պաշտպանություն, եթե ստացողի իրավասության օրենսդրությունը չի պաշտպանում Անձնական տվյալները փոխանցող կազմակերպության իրավասությանը համարժեք ձևով («Տվյալների փոխանցման միջազգային մեխանիզմ»): Կողմերը կհամապատասխանեն Տվյալների փոխանցման միջազգային մեխանիզմին, որը կարող է պահանջվել Տվյալների պաշտպանության մասին գործող օրենքով, ներառյալ Ստանդարտ պայմանագրային դրույթները:
- (բ) Եթե Տվյալների փոխանցման միջազգային մեխանիզմը, որի վրա հիմնվում են կողմերը, անվավեր ճանաչվի կամ փոխարինվի, կողմերը բարեխղճորեն կաշխատեն միասին՝ գտնելու համապատասխան այլընտրանք:
- (ց) Ինչ վերաբերում է Տվյալների սուբյեկտների անձնական տվյալներին, որոնք գտնվում են իրավասության տարածքում, որը պահանջում է Տվյալների փոխանցման միջազգային մեխանիզմ (օր.՝ ԵՏՏ, Շվեյցարիա կամ Միացյալ Թագավորություն), որը Մայքրոսոֆթը փոխանցում է Մատակարարին կամ Նրան թույլ է տալիս մուտք գործել, կողմերը համաձայնում են, որ սույն ԳՊ դրույթներով Նրանք նաև կատարում են Ստանդարտ պայմանագրային դրույթները, որոնք կներառեն հղումը և կկազմեն ԳՊ դրույթների անբաժանելի մասը: Կողմերը համաձայնում են, որ Ստանդարտ պայմանագրային դրույթների այն տարրերի առկայությամբ, որոնք պահանջում են կողմերի ներդրումը, 1-ին և 2-րդ Հավելվածները պարունակում են Ստանդարտ պայմանագրային կետերի հավելվածներին վերաբերող տեղեկատվություն: Կողմերը համաձայնում են, որ Միացյալ Թագավորության, Շվեյցարիայի կամ Հավելված 1-ում նշված մեկ այլ երկրի Տվյալների սուբյեկտների անձնական տվյալների համար Նրանք ընդունում են Հավելված 1-ում թվարկված Ստանդարտ պայմանագրային դրույթների փոփոխությունները՝ ստանդարտ պայմանագրային դրույթները տեղական օրենսդրությանը համապատասխանեցնելու համար, ինչպես կիրառելի է:

## **ԲԱԺԻՆ 5 Ընդհանուր առմամբ տվյալների պաշտպանություն**

- (a) **Համապատասխանություն:** Կողմերը կկատարեն իրենց պարտավորությունները Տվյալների պաշտպանության մասին օրենքի և գաղտնիության մասին իրենց ծանուցումների հիման վրա:
- (b) **Մատակարարի պարտավորությունները որպես Վերահսկող (եթե կիրառելի է):** Եթե Մատակարարը անձնական տվյալների վերահսկող է, որոնք հավաքագրվում, փոխանակվում կամ այլ կերպ մշակվում են՝ կապված Մատակարարի կողմից ԳՊ պայմանների կատարման հետ (տես՝ Հավելված 1), ապա.
- (1) Մատակարարն ընդունում և համաձայնում է, որ ինքնուրույն պատասխանատվություն է կրում համապատասխանության համար և կհամապատասխանի Տվյալների պաշտպանության մասին օրենքին (օր.՝ Վերահսկողների պարտավորությունները),
  - (2) Մատակարարը չի վաճառի անձնական տվյալները,
  - (3) Մատակարարը համաձայնում է, որ Կեղծանուն Տվյալները առանձին կապիի ցանկացած լրացուցիչ տեղեկատվությունից, որն անհրաժեշտ է, որպեսզի նման կեղծանունը վերագրվի որոշակի անձի և կենթարկի այդ կեղծանունային տվյալները համապատասխան տեխնիկական և կազմակերպչական միջոցների՝ ապահովելու համար, որ դրանք չվերագրվեն որոշակի անձի,
  - (4) Մատակարարը համաձայնում է, որ ողջամիտ միջոցներ կձեռնարկի ապահովելու համար, որ ապանույնականացվող տվյալները չեն կարող կապված լինել կոնկրետ սպառողի կամ տնային տնտեսության հետ, հրապարակայնորեն կպարտավորվի պահպանել ապանույնականացված տվյալները ապանույնականացված ձևով և չփորձի նորից նույնականացնել դրանք, և պայմանագրով պարտավորեցնել որևէ ենթամշակողների անել նույնը, և
  - (5) Մատակարարը համաձայնում է պատասխանատու լինել Տվյալների սուբյեկտներին ծանուցում տրամադրելու համար, ինչպես դա կարող է պահանջվել Տվյալների պաշտպանության մասին օրենքներով (օր.՝ ՏՊԸԿ-ի 13-րդ և 14-րդ հոդվածներ, ինչպես կիրառելի է), և պատասխանել, ինչպես օրինակ՝ ՏՊԸԿ-ի Բաժին III, տվյալների սուբյեկտների հայցերին՝ իրենց իրավունքներն իրականացնելու, ինչպես նաև մշակման օրինական հիմքը նույնականացնելու նպատակով (օր.՝ համաձայնություն կամ օրինական հետաքրքրություն):
- (c) **Մատակարարի պարտավորությունները որպես Երրորդ կողմ (եթե կիրառելի է):** Եթե Մատակարարը մշակում է անձնական տվյալները որպես Երրորդ կողմ CCPA-ի համաձայն՝ կապված Մատակարարի կողմից Պայմանագրի կատարման հետ (տես Հավելված 1), ապա.
- (1) Մատակարարը կմշակի անձնական տվյալները միայն Հավելված 1-ում նկարագրված սահմանափակ և հատուկ բիզնես նպատակների համար:
  - (2) Մատակարարը համաձայնում է, որ անձնական տվյալները հասանելի են միայն պայմանագրով նախատեսված սահմանափակ և սահմանված նպատակներով, և որ Մատակարարը կարող է օգտագործել տեղեկատվությունը միայն այդ նպատակների համար:
  - (3) Մատակարարը կհամապատասխանի CCPA-ի բոլոր դրույթներին, որոնք կիրառելի են ձեռնարկությունների համար:
  - (4) Մատակարարը թույլ կտա Մայքրոսոֆթին ողջամիտ և համապատասխան քայլեր ձեռնարկել՝ համոզվելու համար, որ Մատակարարն օգտագործում է անձնական տվյալները, որոնք ստացել է Մայքրոսոֆթից կամ նրա անունից՝ CCPA-ով նախատեսված Մայքրոսոֆթի պարտավորություններին համապատասխան:
  - (5) Մատակարարը թույլ կտա Մայքրոսոֆթին, ծանուցումից հետո, ողջամիտ և համապատասխան քայլեր ձեռնարկել անձնական տվյալների ցանկացած չարտոնված օգտագործումը դադարեցնելու և վերացնելու համար:

- (6) Մատակարարը կտեղեկացնի Մայքրոսոֆթին, եթե որոշի, որ այլևս չի կարող կատարել CCPA-ով նախատեսված իր պարտավորությունները:

**(d) Համագործակցություն**

- (1) **Երրորդ կողմի հարցումներ:** Եթե Մատակարարը ցանկացած տեսակի հարցում կամ խնդրանք է ստանում կառավարական, օրենսդրական, դատական, իրավապահ կամ կանոնակարգող մարմնից (օր.՝ Առևտրի դաշնային հանձնաժողովից, ԱՄՆ Նահանգի գլխավոր դատախազից կամ Տվյալների պաշտպանության եվրոպական մարմնից), կամ առերեսվում է փաստացի կամ հավանական պահանջի, հարցման կամ բողոքի՝ կապված կողմերի՝ Անձնական տվյալների մշակման հետ (միասին՝ «Հարցում»), Մատակարարը կտեղեկացնի Մայքրոսոֆթին առանց անհարկի ուշացման, եթե նման ծանուցումն արգելված չէ գործող օրենքով: Մատակարարը Մայքրոսոֆթին անհապաղ կտրամադրի Հարցմանը վերաբերող տեղեկատվություն, ներառյալ ցանկացած տեղեկություն, որը վերաբերում է հայցի պաշտպանությանը՝ Մայքրոսոֆթին հնարավորություն ընձեռելու պատասխանել Հարցմանը:
- (2) **Տվյալների պաշտպանության մասին օրենքի այլ պահանջներ:** Հարցման դեպքում Մատակարարը համապատասխան տեղեկատվություն կտրամադրի Մայքրոսոֆթին՝ կատարելու Մայքրոսոֆթի պարտավորությունները (ըստ առկայության), իրականացնելու տվյալների պաշտպանության ազդեցության գնահատումներ կամ տվյալների պաշտպանության մարմինների հետ նախնական խորհրդակցություններ:

**ԲԱԺԻՆ 6 Տվյալների անվտանգություն և գաղտնիություն**

- (a) **Գաղտնիություն:** Մատակարարը կապահովի, որ Անձնական Տվյալների Մշակման համար լիազորված անձինք ստանձնեն գաղտնիության ոչ պակաս պաշտպանիչ պարտավորություններ, քան ԳՊ դրույթներով նախատեսված կամ Գաղտնիության համապատասխան օրենքով սահմանված պարտավորությունները:
- (b) **Անվտանգության վերահսկում:** Մատակարարը կհետևի Հավելված 2-ին և կձեռնարկի տվյալների անվտանգության և առնչվող բոլոր միջոցները, որոնք պահանջվում են արդյունաբերության լավ պրակտիկայի և Տվյալների պաշտպանության մասին օրենքի համաձայն (ներառյալ ՏՊԸԿ-ի 32-րդ հոդվածի համաձայն):

**ԲԱԺԻՆ 7 Մատակարարի պարտավորությունները որպես Մշակող, Կապալառու, Ենթամշակող կամ Ծառայություններ մատուցող**

- (a) Մատակարարը կունենա սույն Բաժին 7-ում սահմանված պարտավորությունները, եթե նա մշակում է Տվյալների սուբյեկտների անձնական տվյալները Մայքրոսոֆթի մշակողի Կապալառուի, կամ ծառայություններ մատուցողի կարգավիճակով. հստակության համար նշենք, որ այս պարտավորությունները չեն տարածվում Մատակարարի վրա՝ որպես Վերահսկողի, Գործարարի կամ Երրորդ կողմի:
- (b) **Մշակման շրջանակը**
- (1) Մատակարարը կմշակի անձնական տվյալները բացառապես Մայքրոսոֆթին Ապրանքներ, Ծառայություններ կամ Ամպային ծառայություններ մատուցելու, ԳՊ դրույթներով նախատեսված իր պարտավորությունները կատարելու և Մայքրոսոֆթի փաստաթղթավորված հրահանգները կատարելու համար: Մատակարարը չի մշակի Անձնական տվյալները որևէ այլ նպատակով, բացառությամբ գործող օրենքով նախատեսված դեպքերի և չի վաճառի կամ համօգտագործի Անձնական տվյալները:
- (2) ԳՊ դրույթներից դուրս ցանկացած Անձնական տվյալների մշակումը կպահանջի Մատակարարի և Մայքրոսոֆթի միջև նախնական գրավոր համաձայնություն՝ ԳՊ դրույթներում գրավոր փոփոխություն կատարելու միջոցով:
- (3) Մատակարարը կտեղեկացնի Մայքրոսոֆթին, եթե կարծում է, որ չի կարող հետևել Մայքրոսոֆթի հրահանգներին կամ կատարել ԳՊ դրույթներով նախատեսված իր

պարտավորությունները՝ այն իրավական պարտավորության պատճառով, որը կրում է Մատակարարը, բացառությամբ այն դեպքերի, երբ Մատակարարին օրենքով արգելված է նման ծանուցում կատարել:

**(c) Պարտավորություններ՝ կապված կեղծանունների և չբացահայտված տվյալների հետ**

- (1) Մատակարարը համաձայնում է, որ Կեղծանուն Տվյալները առանձին կապիի ցանկացած լրացուցիչ տեղեկատվությունից, որն անհրաժեշտ է, որպեսզի նման կեղծանունը վերագրվի որոշակի անձի և կենթարկի այդ կեղծանունային տվյալները համապատասխան տեխնիկական և կազմակերպչական միջոցառումների՝ ապահովելու համար, որ դրանք չվերագրվեն որոշակի անձի,
- (2) Մատակարարը համաձայնում է, որ ողջամիտ միջոցներ կձեռնարկի ապահովելու համար, որ ապանույնականացվող տվյալները չեն կարող կապված լինել կոնկրետ սպառողի կամ տնային տնտեսության հետ, հրապարակայնորեն կպարտավորվի պահպանել ապանույնականացված տվյալները ապանույնականացված ձևով և չփորձի նորից նույնականացնել դրանք և պայմանագրով պարտավորեցնել որևէ ենթամշակողների անել նույնը:

**(d) Տվյալների սուբյեկտների՝ իրավունքների իրականացման հարցումները:** Մատակարարն անհապաղ կտեղեկացնի Մայքրոսոֆթին, եթե Մատակարարը խնդրանք ստանա Տվյալների սուբյեկտից՝ Անձնական տվյալների հետ կապված իր իրավունքներից օգտվելու համար՝ Տվյալների պաշտպանության մասին գործող օրենքի հիման վրա: Մայքրոսոֆթը պատասխանատու է նման հարցումներին պատասխանելու համար: Մատակարարը չի պատասխանի նման Տվյալների սուբյեկտներին, բացառությամբ նրանց հարցումների ընդունումը: Մատակարարը Մայքրոսոֆթին կտրամադրի աջակցություն, ըստ պահանջի, օգնելու Մայքրոսոֆթին պատասխանել Տվյալների սուբյեկտի հարցմանը:

**(e) Մատակարարի ենթամշակողներ:** Մատակարարը չի ներգրավվի որպես ենթամշակող՝ առանց Մայքրոսոֆթի նախնական գրավոր թույլտվության: Մատակարարը պատասխանատու կլինի իր ենթամշակողների գործողությունների կամ ենթամշակողի գործողությունների համար, բացառությամբ այն դեպքերի, երբ ԳՊ դրույթներով այլ բան նախատեսված չէ: Մատակարարը կպահանջի ենթամշակողներից գրավոր կերպով համաձայնեցնել պայմանները, որոնք ոչ պակաս պաշտպանիչ են, քան սույն Հավելվածի պայմանները:

**(f) Տվյալների հետ կապված միջադեպ**

- (1) Առանց սահմանափակելու սույն ԳՊ-ով նախատեսված Մատակարարի պարտավորությունները՝ ներառյալ ՏՊԿ-ն և սույն Հավելվածը՝ կապված Անձնական տվյալների հետ, անվտանգության որևէ Տվյալների հետ կապված միջադեպի մասին տեղեկանալիս, Մատակարարը պարտավորվում է.
  - (i) տեղեկացնել Մայքրոսոֆթին՝ առանց Տվյալների հետ կապված միջադեպի անհարկի հետաձգման (ամեն դեպքում, ոչ ուշ, քան այն տեղեկացնում է որևէ Մատակարարի նմանապես տեղակայված հաճախորդներին և բոլոր դեպքերում, նախքան Մատակարարը կատարում է ընդհանուր հանրային որևէ բացահայտում (օր.՝ մամլո հաղորդագրություն)),
  - (ii) անհապաղ ուսումնասիրել կամ անհրաժեշտ աջակցություն տրամադրել անվտանգության միջադեպի ուսումնասիրության համար, ինչպես նաև Մայքրոսոֆթին տրամադրել Տվյալների հետ կապված միջադեպի մասին մանրամասն տեղեկատվություն, ներառյալ Տվյալների հետ կապված միջադեպի մասին բնույթի նկարագրությունը, ազդդակիր տվյալների սուբյեկտների մոտավոր թիվը, Տվյալների հետ կապված միջադեպի մասին ընթացիկ և կանխատեսելի ազդեցությունը և այն միջոցները, որոնք Մատակարարը ձեռնարկում է անվտանգության միջադեպը լուծելու և դրա հետևանքները մեղմելու համար, նաև
  - (iii) անհապաղ կձեռնարկի կոմերցիոն տեսանկյունից ողջամիտ քայլեր՝ Տվյալների



հետ կապված միջադեպի հետևանքները մեղմելու կամ Մայքրոսոֆթին այդ հարցում օգնելու համար:

- (2) Մատակարարն իր սեփական միջոցներով կկատարի սույն 7(f) Բաժինը, եթե Տվյալների հետ կապված միջադեպը չի առաջացել Մայքրոսոֆթի անփույթ կամ կամայական գործողություններից կամ Մայքրոսոֆթի կողմից Մատակարարին հստակ ներկայացված գրավոր ցուցումները չկատարելուց:
- (3) Մատակարարը պետք է ստանա Մայքրոսոֆթի գրավոր հաստատումը նախքան Տվյալների հետ կապված միջադեպի մասին որևէ պետական մարմին, անհատին, մամուլին կամ այլ երրորդ կողմին տեղեկացնելը, որն ազդել է կամ ողջամտորեն կարող է ազդել Մայքրոսոֆթից Մատակարարի ստացած կամ Մայքրոսոֆթի անունից մշակված Գաղտնի տեղեկատվության վրա: Չնայած սույն Հավելվածում առկա որևէ հակադարձող դրույթի, Մատակարարը կարող է երրորդ կողմին տեղեկացնել Անձնական տվյալների վրա ազդող Տվյալների հետ կապված միջադեպի մասին, եթե նա իրավական պարտականություն է կրում դա անել՝ պայմանով, որ Մատակարարը պետք է (i) բոլոր ջանքերը գործադրի նախապես Մայքրոսոֆթին տեղեկացնելու, որքան հնարավոր է շուտ, եթե ինքը մտադիր է երրորդ կողմին բացահայտել Տվյալների հետ կապված միջադեպը, և, (ii) եթե հնարավոր չէ Մայքրոսոֆթին այդպիսի նախնական ծանուցում տալ, անմիջապես կտեղեկացնի Մայքրոսոֆթին ծանուցում տալու առաջին իսկ հնարավորության առաջացման դեպքում: Տվյալների հետ կապված որևէ միջադեպ երրորդ կողմին բացահայտելու համար Մատակարարը, Մայքրոսոֆթին իր ծանուցման շրջանակներում, կբացահայտի երրորդ կողմի ինքնությունը և ծանուցման պատճենը (եթե երրորդ կողմին ծանուցագիրը չի ուղարկվել, Մատակարարը Մայքրոսոֆթին կտրամադրի դրա սևագիրը): Մատակարարը Մայքրոսոֆթին թույլ կտա առաջարկել ծանուցման փոփոխություններ կամ թարմացումներ:

(g) **Գաղտնի տեղեկատվության ջնջում և վերադարձ:** Գործող աշխատանքային դրույթների, ամպային պատվերների, գնման պատվերի կամ կողմերի միջև այլ գրավոր համաձայնագրի ժամկետը լրանալու կամ դրա դադարեցման դեպքում կամ Մայքրոսոֆթի կամ նրա մասնաճյուղի խնդրանքով Մատակարարը, առանց անհարկի ձգձգման, (1) Մայքրոսոֆթին կամ նրա մասնաճյուղին է վերադարձնում Մայքրոսոֆթի ողջ գաղտնի տեղեկատվությունը, (ներառյալ դրա պատճենները) կամ (2) Մայքրոսոֆթի կամ նրա մասնաճյուղի խնդրանքով ոչնչացնում է Մայքրոսոֆթի ողջ գաղտնի տեղեկատվությունը (ներառյալ դրա պատճենները), յուրաքանչյուր դեպքում, եթե գործող օրենքն ակնհայտորեն այլ բան չի պահանջում կամ կողմերն այլ կերպ չեն եկել գրավոր համաձայնության: Աշխատանքային դրույթների, ամպային պատվերի կամ կողմերի միջև այլ գրավոր համաձայնագրի ժամկետը լրանալուց կամ դրա դադարեցումից հետո Մատակարարի կողմից Մայքրոսոֆթի ցանկացած գաղտնի տեղեկատվություն պահպանելու պարագայում (օրինակ՝ այն պատճառով, որ Մատակարարը օրենքով պարտավոր է պահպանել տեղեկությունները) Մատակարարը կշարունակի պահպանել սույն Հավելվածի տվյալների անվտանգության և գաղտնիության դրույթները, և Մատակարարը պետք է ապանույնականացնի կամ հնարավորինս համախմբի անձնական տվյալները (դրանց առկայության դեպքում): Բոլոր անձնական տվյալները համարվում են Գաղտնի տեղեկատվություն:

(h) **Աուդիտ:** Առանց Մայքրոսոֆթի՝ սույն ԳԴ դրույթների ներքո գոյություն ունեցող աուդիտորական իրավունքներից որևէ մեկի սահմանափակման (ըստ առկայության), մատչելի դարձնել Մայքրոսոֆթին անհրաժեշտ բոլոր տեղեկությունները Տվյալների պաշտպանության մասին օրենքի հետ համապատասխանությունը ցույց տալու համար, և թույլատրել ու նպաստել աուդիտին, ներառյալ՝ Մայքրոսոֆթի կողմից կամ Մայքրոսոֆթի կողմից նշանակված այլ աուդիտորի կողմից իրականացվող ստուգումները:

**Հավելված 1. Մշակման և ենթամշակողների նկարագրությունը**

Մշակման գործունեությունը	Կողմերի կարգավիճակը	Անձնական տվյալների անվանակարգեր, որոնք կարող են մշակվել <i>Թվարկված անվանակարգերը նկարագրական են և անպայմանորեն չի նշանակում, որ կողմերը մշակում են թվարկված տվյալների յուրաքանչյուր անվանակարգ:</i>	Չգայուն տվյալների անվանակարգեր, որոնք կարող են մշակվել <i>Թվարկված անվանակարգերը նկարագրական են և անպայմանորեն չի նշանակում, որ կողմերը մշակում են թվարկված տվյալների յուրաքանչյուր անվանակարգ:</i>	Գործող SCCs մոդուլ
Մատակարարը մշակում է անձնական տվյալները՝ Ապրանքները, Ծառայությունները և Ամպային ծառայությունները տրամադրելու համար:	Մայքրոսոֆթը վերահսկող է:  Մատակարարը մշակող է:	<ul style="list-style-type: none"> <li>• Գտնվելու վայրի վերաբերյալ տվյալներ</li> <li>• IP հասցե</li> <li>• Սարքի նախապատվություններ և անհատականացում</li> <li>• Ծառայությունների օգտագործումը վեբ-կայքերի համար, կայքերում հպումների հետևում</li> <li>• Սոցիալական ցանցերում տվյալներ, սոցիալական ցանցում պրոֆիլի հարաբերություններ</li> <li>• Միացված սարքերից գործունեության տվյալներ, ինչպիսիք են ֆիթնես մոնիտորները</li> <li>• Կոնտակտային տվյալներ, ինչպիսիք են անուն-ազգանունը, հասցեն, հեռախոսահամարը, Էլ.փոստի հասցեն, ծննդյան ամսաթիվը, կախյալ անձինք և արտակարգ իրավիճակներում կոնտակտային անձինք</li> <li>• Խարդախություն և ռիսկերի գնահատում,</li> </ul>	<ul style="list-style-type: none"> <li>• Երեխաներին վերաբերող տվյալներ</li> <li>• Գենետիկական տվյալներ</li> <li>• Կենսաչափական տվյալներ</li> <li>• Առողջական վիճակի վերաբերյալ տվյալներ</li> <li>• Ռասայական կամ էթնիկ ծագում</li> <li>• Քաղաքական հայացքներ</li> <li>• Կրոնական կամ փիլիսոփայական համոզմունքներ</li> <li>• Արհմիության անդամակցություն</li> <li>• Ֆիզիկական անձի սեռական կյանք կամ սեռական կողմնորոշում</li> <li>• Ներգաղթի կարգավիճակ (մուտքի արտոնագիր, աշխատանքի թույլտվություն և այլն)</li> <li>• Կառավարության նույնականացուցիչներ (անձնագիր, վարորդական իրավունք, մուտքի արտոնագրեր, սոցիալական ապահովության</li> </ul>	Մոդուլ 2  Մոդուլ 3, եթե Մայքրոսոֆթը հանդես է գալիս որպես մեկ այլ վերահսկողի մշակող

Մշակման գործունեությունը	Կողմերի կարգավիճակը	Անձնական տվյալների անվանակարգեր, որոնք կարող են մշակվել  <i>Թվարկված անվանակարգերը նկարագրական են և անպայմանորեն չի նշանակում, որ կողմերը մշակում են թվարկված տվյալների յուրաքանչյուր անվանակարգ:</i>	Չգայուն տվյալների անվանակարգեր, որոնք կարող են մշակվել  <i>Թվարկված անվանակարգերը նկարագրական են և անպայմանորեն չի նշանակում, որ կողմերը մշակում են թվարկված տվյալների յուրաքանչյուր անվանակարգ:</i>	Գործող SCCs մոդուլ
		<p>կենսագրական տվյալների ստուգում</p> <ul style="list-style-type: none"> <li>• Ապահովագրություն, կենսաթոշակ, նպաստի մանրամասներ</li> <li>• Թեկնածուների ռեզյումեներ, հարցազրույցի ընթացքում արված նշումներ/կարծիք</li> <li>• Մետատվյալներ և հեռահաղորդակցական տվյալներ</li> <li>• Վճարման գործիքի տվյալներ</li> <li>• Վարկային քարտի համարը և պիտանիության ժամկետ</li> <li>• Բանկի երթուղայնացման տեղեկություններ</li> <li>• Բանկային հաշվի համար</li> <li>• Վարկային հարցումներ – Վարկային գիծ</li> <li>• Հարկային փաստաթղթեր և նույնականացուցիչներ</li> <li>• Ներդրումային տվյալներ</li> <li>• Կորպորատիվ քարտեր</li> </ul>	<p>համարներ, ազգային նույնականացման համարներ)</p>	

Մշակման գործունեությունը	Կողմերի կարգավիճակը	Անձնական տվյալների անվանակարգեր, որոնք կարող են մշակվել  <i>Թվարկված անվանակարգերը նկարագրական են և անպայմանորեն չի նշանակում, որ կողմերը մշակում են թվարկված տվյալների յուրաքանչյուր անվանակարգ:</i>	Չգայուն տվյալների անվանակարգեր, որոնք կարող են մշակվել  <i>Թվարկված անվանակարգերը նկարագրական են և անպայմանորեն չի նշանակում, որ կողմերը մշակում են թվարկված տվյալների յուրաքանչյուր անվանակարգ:</i>	Գործող SCCs մոդուլ
		<ul style="list-style-type: none"> <li>• Ծախսերի վերաբերյալ տվյալներ</li> <li>• Azure tenant, M365 tenant</li> <li>• Xbox Live, OneDrive Consumer</li> <li>• Հաճախորդի կողմից բացված հայց՝ աջակցության ծառայությանը</li> <li>• Վճարման տվյալներ</li> <li>• Էլ. կոմերցիայի տվյալներ</li> <li>• Իրադարձության գրանցում</li> <li>• Դասընթաց</li> <li>• Գլոբալ եզակի նույնացուցիչ (GUID)</li> <li>• Օգտագործողի անձնագրային ID կամ եզակի նույնացուցիչ (PUID)</li> <li>• Վերջնական օգտագործողին նույնականացնող խեշավորված տեղեկություններ (EUII) Աշխատաշրջանի ID-ներ</li> <li>• Սարքերի ID-ներ</li> <li>• Դիագնոստիկ տվյալներ</li> <li>• Գրանցամատյանների տվյալներ</li> </ul>		

Մշակման գործունեությունը	Կողմերի կարգավիճակը	Անձնական տվյալների անվանակարգեր, որոնք կարող են մշակվել	Չգայուն տվյալների անվանակարգեր, որոնք կարող են մշակվել	Գործող SCCs մոդուլ
Կողմերը մշակում են իրենց աշխատակիցների անձնական տվյալները, օր.՝ կառավարելու և մատուցելու Ապրանքներ, Ծառայություններ և Ամպային ծառայություններ, կառավարելու հաշիվ-ապրանքագրերը, կառավարելու ԳՊ պայմանները և լուծելու դրա հետ կապված վեճերը, պատասխանելու և/կամ բարձրացնելու ընդհանուր հարցումները, համապատասխանելու իրենց համապատասխան կանոնակարգող պարտավորություններին և ստեղծելու ու կառավարելու համացանցի վրա հիմնված հաշիվներ:	Մայքրոսոֆթը վերահսկող է:  Մատակարարը մշակող է:	<ul style="list-style-type: none"> <li>Աշխատողի անունը, կոչումը և այլ կոնտակտային տվյալներ</li> <li>Աշխատողի ID-ներ</li> <li>Սարքի և/կամ գործունեության Տվյալներ՝ կապված Մայքրոսոֆթի աշխատակիցների սեղմումների կամ Մատակարարի սարքավորումների և ծրագրաշարի այլ փոխազդեցությունների հետ</li> </ul>	Ոչ մի	Մոդուլ 2  Մոդուլ 3, եթե Մայքրոսոֆթը հանդես է գալիս որպես մեկ այլ վերահսկողի մշակող
Մատակարարը հավաքում կամ ստանում է Անձնական տվյալները որպես վերահսկող/երրորդ.	Մայքրոսոֆթը վերահսկող է:  Մատակարարը վերահսկող	<ul style="list-style-type: none"> <li>Գտնվելու վայրի վերաբերյալ տվյալներ</li> <li>IP հասցե</li> <li>Սարքի նախապատվություններ</li> </ul>	<ul style="list-style-type: none"> <li>Երեխաներին վերաբերող տվյալներ</li> <li>Գենետիկական տվյալներ</li> <li>Կենսաչափական տվյալներ</li> </ul>	Մոդուլ 1

Մշակման գործունեությունը	Կողմերի կարգավիճակը	Անձնական տվյալների անվանակարգեր, որոնք կարող են մշակվել	Չգայուն տվյալների անվանակարգեր, որոնք կարող են մշակվել	Գործող SCCs մոդուլ
կողմ:	դ/երրորդ կողմ է:	<p>Թվարկված անվանակարգերը նկարագրական են և անպայմանորեն չի նշանակում, որ կողմերը մշակում են թվարկված տվյալների յուրաքանչյուր անվանակարգ:</p> <ul style="list-style-type: none"> <li>Եր և անհատականացում</li> <li>Ծառայությունների օգտագործումը վեբ-կայքերի համար, կայքերում հպումների հետևում</li> <li>Սոցիալական ցանցերում տվյալներ, սոցիալական ցանցում պրոֆիլի հարաբերություններ</li> <li>Միացված սարքերից գործունեության տվյալներ, ինչպիսիք են ֆիթնես մոնիտորները</li> <li>Կոնտակտային տվյալներ, ինչպիսիք են անուն-ազգանունը, հասցեն, հեռախոսահամարը, Էլ.փոստի հասցեն, ծննդյան ամսաթիվը, կախյալ անձինք և արտակարգ իրավիճակներում կոնտակտային անձինք</li> <li>Խարդախություն և ռիսկերի գնահատում, կենսագրական տվյալների ստուգում</li> <li>Ապահովագրություն, կենսաթոշակ, նպաստի մանրամասներ</li> </ul>	<p>Թվարկված անվանակարգերը նկարագրական են և անպայմանորեն չի նշանակում, որ կողմերը մշակում են թվարկված տվյալների յուրաքանչյուր անվանակարգ:</p> <ul style="list-style-type: none"> <li>Առողջական վիճակի վերաբերյալ տվյալներ</li> <li>Ռասայական կամ էթնիկ ծագում</li> <li>Քաղաքական հայացքներ</li> <li>Կրոնական կամ փիլիսոփայական համոզմունքներ</li> <li>Արհմիության անդամակցություն</li> <li>Ֆիզիկական անձի սեռական կյանք կամ սեռական կողմնորոշում</li> <li>Ներգաղթի կարգավիճակ (մուտքի արտոնագիր, աշխատանքի թույլտվություն և այլն)</li> <li>Կառավարության նույնականացուցիչներ (անձնագիր, վարորդական իրավունք, մուտքի արտոնագրեր, սոցիալական ապահովության համարներ, ազգային նույնականացման համարներ)</li> </ul>	

Մշակման գործունեությունը	Կողմերի կարգավիճակը	Անձնական տվյալների անվանակարգեր, որոնք կարող են մշակվել  <i>Թվարկված անվանակարգերը նկարագրական են և անպայմանորեն չի նշանակում, որ կողմերը մշակում են թվարկված տվյալների յուրաքանչյուր անվանակարգ:</i>	Չգայուն տվյալների անվանակարգեր, որոնք կարող են մշակվել  <i>Թվարկված անվանակարգերը նկարագրական են և անպայմանորեն չի նշանակում, որ կողմերը մշակում են թվարկված տվյալների յուրաքանչյուր անվանակարգ:</i>	Գործող SCCs մոդուլ
		<ul style="list-style-type: none"> <li>• Թեկնածուների ռեգիստրներ, հարցազրույցի ընթացքում արված նշումներ/կարծիք</li> <li>• Մետատվյալներ և հեռահաղորդակցական տվյալներ</li> <li>• Վճարման գործիքի տվյալներ</li> <li>• Վարկային քարտի համարը և պիտանիության ժամկետ</li> <li>• Բանկի երթուղայնացման տեղեկություններ</li> <li>• Բանկային հաշվի համար</li> <li>• Վարկային հարցումներ – Վարկային գիծ</li> <li>• Հարկային փաստաթղթեր և նույնականացուցիչներ</li> <li>• Ներդրումային տվյալներ</li> <li>• Կորպորատիվ քարտեր</li> <li>• Ծախսերի վերաբերյալ տվյալներ</li> <li>• Azure tenant, M365 tenant</li> <li>• Xbox Live, OneDrive Consumer</li> </ul>		

Մշակման գործունեությունը	Կողմերի կարգավիճակը	Անձնական տվյալների անվանակարգեր, որոնք կարող են մշակվել	Չգայուն տվյալների անվանակարգեր, որոնք կարող են մշակվել	Գործող SCCs մոդուլ
		Թվարկված անվանակարգերը նկարագրական են և անպայմանորեն չի նշանակում, որ կողմերը մշակում են թվարկված տվյալների յուրաքանչյուր անվանակարգ:	Թվարկված անվանակարգերը նկարագրական են և անպայմանորեն չի նշանակում, որ կողմերը մշակում են թվարկված տվյալների յուրաքանչյուր անվանակարգ:	
		<ul style="list-style-type: none"> <li>Հաճախորդի կողմից բացված հայց աջակցության ծառայությանը</li> <li>Բիլինգային տվյալներ <ul style="list-style-type: none"> <li>Էլ. կոմերցիայի տվյալներ</li> </ul> </li> <li>Իրադարձության գրանցում</li> <li>Դասընթաց</li> <li>Գլոբալ եզակի նույնացուցիչ (GUID)</li> <li>Օգտագործողի անձնագրային ID կամ եզակի նույնացուցիչ (PUID)</li> <li>Վերջնական օգտագործողին նույնականացնող խեշավորված տեղեկություններ (EUII)- Աշխատաշրջանի ID-ներ</li> <li>Սարքերի ID-ներ</li> <li>Դիագնոստիկ տվյալներ</li> <li>Գրանցամատյանների տվյալներ</li> </ul>		

### Ենթամշակողներ

Մատակարարն օգտագործում է աշխատանքային դրույթներում կամկողմերի լիազորված ներկայացուցիչների կողմից ստորագրված գրավոր պայմանագրում նշված ենթամշակողներին, երբ նա հանդես է գալիս որպես Մշակող:

### Տեղեկատվություն՝ միջազգային փոխանցումների համար

*Փոխանցման հաճախականությունը*



Շարունակական և բոլոր Անձնական տվյալների համար:

*Պահպանման ժամկետները*

Որպես Վերահսկողներ՝ կողմերը պահում են Անձնական տվյալները այնքան ժամանակ, քանի դեռ նրանք ունեն բիզնես նպատակ կամ գործող օրենսդրությամբ թույլատրելի ամենաերկար ժամանակը:

Որպես Մշակող, Մատակարարը պահպանում է Անձնական տվյալները, որոնք հավաքում կամ ստանում է Մայքրոսոֆթից, ԳՊ դրույթների գործողության ընթացքում և որոնք համապատասխանում են սույն Հավելվածում նրա պարտավորություններին:

*Ստանդարտ պայմանագրային դրույթների նպատակով.*

- 7-րդ կետ՝ Կողմերը չեն հաստատում միացման ընտրանքային կետը:
- 9-րդ կետ՝ Մոդուլ 2(ա), եթե կիրառելի է. Կողմերն ընտրում են Տարբերակ 1-ը: Ժամկետը 30 օր է:
- 9-րդ կետ՝ Մոդուլ 3(ա), եթե կիրառելի է. Կողմերն ընտրում են Տարբերակ 1-ը: Ժամկետը 30 օր է:
- 11-րդ (a) կետ՝ Կողմերը չեն ընտրում վեճերի անկախ լուծման տարբերակը:
- 17-րդ կետ՝ Կողմերն ընտրում են Տարբերակ 1-ը: Կողմերը համաձայն են, որ գործում է Իռլանդիայի օրենսդրությունը:
- 18-րդ կետ՝ Կողմերը համաձայն են, որ ֆորումը Իռլանդիան է:
- Հավելված I(A)՝ Տվյալների արտահանողը Տվյալների արտահանողն է (սահմանված է վերևում), իսկ Տվյալների ներմուծողը Տվյալների ներմուծողն է (սահմանված է վերևում):
- Հավելված I(B)՝ Կողմերը համաձայն են, որ Հավելված 1-ը նկարագրում է փոխանցումը:
- Հավելված I(C)՝ Իրավասու վերահսկող մարմինը Իռլանդիայի տվյալների պաշտպանության հանձնաժողովն է:
- Հավելված II՝ Կողմերը համաձայն են, որ Հավելված 2-ը նկարագրում է փոխանցման համար կիրառելի տեխնիկական և կազմակերպչական միջոցառումները:

*Ստանդարտ պայմանագրային դրույթների տեղայնացման նպատակով:*

- Շվեյցարիա
  - Կողմերն ընդունում են ՏՊԸԿ ստանդարտը բոլոր տվյալների փոխանցման համար:
  - 13-րդ կետ և Հավելված I(Գ)՝ 13-րդ կետի և Հավելված I(Գ)-ի համաձայն իրավասու մարմիններն են Տվյալների պաշտպանության և տեղեկատվության դաշնային հանձնակատարը և, միաժամանակ, վերը նշված ԵՏՀ անդամ պետության մարմինը:
  - 17-րդ կետ՝ Կողմերը համաձայն են, որ գործում է Իռլանդիայի օրենսդրությունը:
  - 18-րդ կետ՝ Կողմերը համաձայն են, որ ֆորումը Իռլանդիան է: Կողմերը համաձայնում են մեկնաբանել Ստանդարտ պայմանագրային դրույթները, որպեսզի Տվյալների սուբյեկտները Շվեյցարիայում կարողանան դատական կարգով պաշտպանել իրենց իրավունքները՝ համաձայն 18(c) կետի:
  - Կողմերը համաձայնում են մեկնաբանել Ստանդարտ պայմանագրային դրույթները, որպեսզի «Տվյալների սուբյեկտները» ներառեն տեղեկատվություն Շվեյցարիայի իրավաբանական անձանց մասին՝ մինչև Տվյալների պաշտպանության մասին վերանայված դաշնային օրենքի ուժի մեջ մտնելը:
- Միացյալ Թագավորություն
  - «Մեծ Բրիտանիայի SCC/ՄԴԴ (Ստանդարտ պայմանագրային դրույթներ) հավելված» նշանակում է տվյալների փոխանցման միջազգային հավելում ԵՄ հանձնաժողովի ստանդարտ պայմանագրային դրույթներին, որը թողարկվել է Միացյալ Թագավորության

տեղեկատվության հանձնակատարի գրասենյակի կողմից՝ համաձայն 2018թ. S119A(1) Տվյալների պաշտպանության ակտի, որը ժամանակ առ ժամանակ փոփոխվում է Տեղեկատվության հանձնակատարի գրասենյակի կողմից և հասանելի է՝ <https://ico.org.uk/for-organisations/guide-to-data-protection/guide-to-the-general-data-protection-regulation-gdpr/international-data-transfer-agreement-and-guidance/>:

- Միացյալ Թագավորությունից փոխանցումների համար, որոնք ենթակա չեն համարժեքության որոշման կամ բացառության, կողմերը սույնով ընդգրկում են Միացյալ Թագավորության SCC Հավելվածը հղումով և, ստորագրելով այս ՏՊՀ-ը, նաև ընդունում և համաձայնվում են պարտավորված լինել ՄԹ SCC-ի Հավելվածի պարտադիր դրույթներով:
- Կողմերը համաձայնում են, որ հետևյալ տեղեկատվությունը վերաբերում է ՄԹ SCC Հավելվածի 1-4 աղյուսակներին, և որ փոխելով աղյուսակների ձևաչափն ու բովանդակությունը, կողմերից ոչ մեկը մտադիր չէ նվազեցնել Համապատասխան երաշխիքները (ինչպես սահմանված է ՄԹ SCC հավելվածում):
  - Աղյուսակ 1. Կողմերի տվյալները, հիմնական կոնտակտները, տվյալների սուբյեկտի կոնտակտները և ստորագրությունները գտնվում են DPA-ի ստորագրության բլոկում:
  - Աղյուսակ 2. Ընտրված SCC-ները, մոդուլները և ընտրված կետերը նկարագրված են Հավելված 1-ում:
  - Աղյուսակ 3. Կողմերի ցանկը, փոխանցման նկարագրությունը և ենթամշակողների ցուցակը նկարագրված են Հավելված 1-ում: Տվյալների անվտանգությունն ապահովելու տեխնիկական և կազմակերպչական միջոցառումները նկարագրված են Հավելված 2-ում:
  - Աղյուսակ 4. Կողմերից ոչ մեկը չի կարող դադարեցնել ՄԹ SCC հավելվածը՝ Հաստատված Հավելվածի փոփոխության դեպքում:
- Ստանդարտ պայմանագրային դրույթների 17-րդ կետ. Կողմերը համաձայն են, որ գործում է Միացյալ Թագավորության օրենսդրությունը:
- Ստանդարտ պայմանագրային դրույթների 18-րդ կետ. Կողմերը համաձայն են, որ \$որումը Անգլիայի և Ուելսի դատարաններն են: Կողմերը համաձայնում են, որ տվյալների սուբյեկտները կարող են դատական գործ հարուցել կողմերից մեկի դեմ Միացյալ Թագավորության ցանկացած երկրի դատարաններում:

**Հավելված 2՝ Տեխնիկական և կազմակերպչական անվտանգության միջոցառումներ**

Մատակարարը կհետևի Մայքրոսոֆթի ՏՊԿ-ին, ինչպես համաձայնեցված է սույն ԳՊ դրույթների Բաժին 15(ա)-ով:

*[Այս էջի մնացած մասը դիտավորյալ է ազատ թողնված:]*